ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁ

2025



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՆՖԵԴԵՐԱՑԻԱ

ՀԱՄԿ•ԿՊԱ•ՀՏՍԱ•ՀԱՄԿ

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա

Բովանդակություն

01 Ողջույնի խոսք (էջ 4)

02 «Արիմիութենական անցուդարձ» հունվար (էջ 5-13)

03 «Արիմիութենական անցուդարձ» փետրվար (էջ 14-18)

04 «Արիմիութենական անցուդարձ» մարտ (էջ 19-26)

05 «Արիմիութենական անցուդարձ» ապրիլ (էջ 27-35)

06 «Արիմիութենական անցուդարձ» մայիս (էջ 36-45)

07 «Արիմիութենական անցուդարձ» հունիս (էջ 46-55)

08 «Արիմիութենական անցուդարձ» հուլիս (էջ 56-63)

09 «Արիմիութենական անցուդարձ» օգոստոս (էջ 64-70)

10 «Արիմիութենական անցուդարձ» սեպտեմբեր (էջ 71-79)

11 «Արիմիութենական անցուդարձ» հոկտեմբեր (Էջ 80-96)

12 «Արիմիութենական անցուդարձ» նոյեմբեր (Էջ 97-106)

13 «Արիմիութենական անցուդարձ» դեկտեմբեր (Էջ 107-120)

14 2025 թվականի ամփոփումը թվերով (էջ 121-123)

Ողջույնի խոսք

«Արհմիութենական անցուդարձ 2025» տարեգիրքը ներկայացնում է **2025** թվականին Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի **(ՀԱՄԿ)** կողմից կատարված աշխատանքները: Այս տարեգիրքը վկայում է միասնության ուժի և համատեղ ջանքերի շնորհիվ արձանագրված առաջընթացի մասին: Շնորհակալություն բոլոր նրանց, ովքեր իրենց ներդրումն ունեցան մեր հաջողությունների մեջ: Շարունակենք միասին առաջ մղել մեր ընդհանուր առաքելությունը՝ ապահովելով աշխատողների արժանապատիվ աշխատանքն ու իրավունքների պաշտպանությունը:



ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁ

Panorama.am-ի հարցազրույցը Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանի հետ

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը **2025** թվականի հունվարի **9**-ին զրուցել է **Panorama.am** լրատվական կայքէջի լրագրողի հետ ֆիզիկական անձանց համընդհանուր հայտարարագրման վերաբերյալ։ Հարցազրույցի ընթացքում անդրադարձել են հետևյալ հարցերին. ՀՀ քաղաքացին արդյո՞ք իրազեկված է իր կյանքին առնչվող այդ կարևոր փոփոխության մանրամասներին և կարգին, պետությունը ստեղծե՞լ է դրա համար բոլոր անհրաժեշտ պայմանները, և արդյո՞ք արդարացված է տույժերի վերոնշյալ համակարգը։

Հոդվածն ամբողջությամբ ընթերցելու համար այցելեք հետևյալ հղումով.
https://www.panorama.am/am/news/2025/01/09/%D4%B7%D5%AC%D5%A5%D5%B6%D5%84%D5%A1%D5%B6%D5%A1%D5%BD%D5%A5%D6%80%D5%B5%D5%A1%D5%B6/3099875

«Մեդիա կենտրոն»-ում քննարկում «7-ժամյա աշխատանքային օրը կբարձրացնի՞ կյանքի որակը՝ չվնասելով տնտեսությանը» թեմայով

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից 2024 թվականի դեկտեմբեր ամսին շրջանառվել է «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ, որով առաջարկվում է կրճատել աշխատաժամանակի տևողությունը՝ դարձնելով օրական 8-ից 7 ժամ, շաբաթական՝ 40-ից 35՝ պահպանելով աշխատավարձը:

2025 թվականի հունվարի 10-ին «Մեդիա կենտրոն»-ում տեղի է ունեցել «7-ժամյա աշխատանքային օրը կբարձրացնի՞ կյանքի որակը՝ չվնասելով տնտեսությանը» թեմայով քննարկում: Քննարկման բանախոսներն էին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ռուբեն Սարգսյանը և Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը:

Տեսանյութը կարող եք դիտել՝ հետևելով հղմանը.
https://www.youtube.com/watch?v=ibOxSpxVsvg

Հարցազրույց
«Որքանո՞վ են պաշտպանված աշխատանքային իրավունքները Հայաստանում» թեմայով

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահի տեղակալ Տիրուհի Նազարեթյանը **2025** թվականի հունվարի **14**-ին Արմալուրի եթերում, որը հեռարձակվում է Արմա Թիվիի (Արմավիրի մարզային հեռուստաալիք) կողմից, անդրադարձել է աշխատողների աշխատանքային իրավունքների խախտման դեպքերին, ինչպես նաև աշխատանքային պայմանագրի առկայության առավելություններին։

Արմալուրի հաղորդումը կարող եք դիտել՝ հետևելով հղմանը **https://www.youtube.com/watch?v=v66TWK_ddCs**

Հարցազրույց Mediaforedu.am-ի հետ

Mediaforedu.am-ը զրուցել է Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանի հետ ուսուցիչների կողմից առաջ քաշած խնդիրների շուրջ, որոնք վերաբերել են դպրոցներում արհմիությունների գործունեությանը:

Ամբողջական նյութին կարող եք ծանոթանալ՝ հետևելով հղմանը.

https://mediaforedu.am/school-labor-union-problems/

Քննարկում «Ի՞նչ խնդիր է իրականում լուծում եկամտի համընդհանուր հայտարարագիրը» թեմայով

2025 թվականի հունվարի **10**-ին «Մեդիա կենտրոն»-ում տեղի է ունեցել քննարկում «Ի՞նչ խնդիր է իրականում լուծում եկամտի համընդհանուր հայտարարագիրը» թեմայով: Քննարկման բանախոսներն էին ՀՀ ֆինանսաների նախարարության Եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության պետ Օրի Ալավերդյանը, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը, «Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ նախագահ Փայլակ Թադևոսյանը, քաղաքացի Տաթև Ղազարյանը:
Է. Մանասերյանը նշել է, որ համընդհանուր հայտարարագրումը լրացուցիչ բեռ է աշխատող մարդու համար: Անկախ նրանից՝ դա **1000**, թե **10000** դրամ է,աշխատողի համար լրացուցիչ բեռ է:

Տեսանյութը կարող եք դիտել՝ հետևելով հղմանը
https://www.youtube.com/watch?v=10y19Xnll04&t=42s

Հարցազրույց
ֆիզիկական անձանց եկամուտների համընդհանուր հայտարարագրման հետ կապված խնդիրների վերաբերյալ

2025 թվականի հունվարի **27**-ին «Օրակարգ» հաղորդաշարի հյուրն էր Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը:
Է. Մանասերյանը խոսել է ֆիզիկական անձանց եկամուտների համընդհանուր հայտարարագրման հետ կապված խնդիրների վերաբերյալ՝ նշելով, որ համընդհանուր հայտարարագրումը բեռ է, որին պատրաստ չենք:

Հարցազրույցը կարող եք դիտել՝ հետևելով հղմանը.
https://www.youtube.com/watch?v=LpVknoY8fl8

Ֆիզիկական անձանց եկամուտների համընդհանուր հայտարարագրման ուղեցույց-տեսահոլովակ



Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի աշխատակազմի կողմից աշխատողների համար պատրաստվել է ֆիզիկական անձանց եկամուտների համընդհանուր հայտարարագրման վերաբերյալ ուղեցույց-տեսահոլովակ :

Տեսահոլովակը կարող եք դիտել՝ հետևելով հղմանը https://www.youtube.com/watch?v=ta1kO7UqzE0

«Առավոտ լուսո» հաղորդումը հյուրընկալվել էր Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանին

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը հյուրընկալվել էր «Առավոտ լուսո» հաղորդմանը: Հաղորդման ընթացքում Է. Մանասերյանը խոսել է աշխատողների հոգեկան առողջության, առողջ և անվտանգ աշխատանքային պայմանների ապահովման մասին:

Տեսանյութը կարող եք դիտել `հետևելով հղմանը
https://www.youtube.com/watch?v=vjJp7t5J6vM&t=1s

ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁ

ՀԱՄԿ-ի ղեկավարությունը ԶՊՄԿ-ում՝ աշխատողների իրավունքների պաշտպանության առաջնագծում

2025 թվականի հունվարի **31**-ից մինչև **2025** թվականի փետրվարի **10**-ը Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի (ԶՊՄԿ) մի խումբ աշխատողներ դադարեցրել են իրենց աշխատանքային գործունեությունը՝ չներկայանալով աշխատանքի։ Բողոքի ակցիայի ընթացքում աշխատողները ներկայացրել են աշխատավարձի բարձրացման վերաբերյալ իրենց պահանջները՝ նպատակ ունենալով բարելավել աշխատանքային և սոցիալական պայմանները։

Այդ օրերին արհմիության ներկայացուցիչները, Լեռնագործների, մետալուրգների և ոսկերիչների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունն աշխատանքներ են տարել աշխատողների և գործատուի հետ խնդիրը երկխոսության ճանապարհով լուծելու ուղղությամբ, ինչպես նաև բողոքի ակցիան օրինական ճանապարհով իրականացնելու վերաբերյալ՝ հետագա խնդիրներից խուսափելու համար։

2025 թվականի փետրվարի **10**-ին Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը և նախագահի տեղակալ Տիրուհի Նազարեթյանը այցելել են Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ, որտեղ հանդիպել են բողոքի ակցիայի մասնակից աշխատողներին։ Հանդիպումից հետո նրանք անցկացրել են բանակցություններ ԶՊՄԿ-ի գլխավոր տնօրենի և գործատուի ներկայացուցիչների հետ՝ աշխատողների բարձրացրած հարցերի շուրջ։

7 ժամ տևած բանակցությունից հետո գործատուն վերահաստատել է իր պատրաստակամությունը՝ վերանայել աշխատավարձերը սոցիալական արդարության սկզբունքով։ Համաձայն ձեռք բերված պայմանավորվածության՝ աշխատանքը վերսկսելու պահից մեկ ամսվա ընթացքում կսկսվի վերանայման գործընթացը։

Գործատուն նաև երաշխավորել է, որ բողոքի ակցիայի մասնակիցների նկատմամբ չի լինի հետապնդում կամ խտրական վերաբերմունք, ինչպես նաև աշխատանքից նոր ազատումներ չեն իրականացվի։

ՀԱՄԿ-ը վերահաստատել է իր հանձնառությունը՝ հետևել բոլոր ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացմանը և պաշտպանել աշխատողների շահերը։ Այս գործընթացը ևս մեկ անգամ ընդգծում է աշխատողների միասնականության և համախմբվածության կարևորությունը՝ արժանապատիվ աշխատանքի միջավայրի ձևավորման ճանապարհին։

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանի հետ հարցազրույցը ԶՊՄԿ-ի աշխատողների բողոքի ակցիայի վերաբերյալ

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը հյուրընկալվել է «**Panorama**-հարցազրույցներ» տաղավարում և խոսել է ԶՊՄԿ-ում աշխատողների կողմից իրականացված բողոքի ակցիայի մասին։

Հարցազրույցը հրապարակվել է **Panorama.am** լրատվական կայքէջում **2** մասով։

Հարցազրույցի 1-ին մասը կարող եք դիտել՝ հետևելով հղմանը https://rb.gy/qt1gjp, իսկ 2-րդ մասը՝https://rb.gy/nxyq5n։

«Բռնությունն ու ոտնձգությունն աշխատավայրում» տեսահոլովակ

Բռնությունն ու ոտնձգությունն աշխատանքի աշխարհում տարածված և վնասակար երևույթներ են, որոնք հանգեցնում են մի շարք լրջագույն հետևանքների՝ սկսած ֆիզիկական ու հոգեկան առողջության ծանր խնդիրներից մինչև ձախողված կարիերա։
Այս խնդրի առնչությամբ 2019թ.-ի հունիսին Աշխատանքի միջազգային կազմակերպությունն (ԱՄԿ) ընդունել է Բռնության և ոտնձգությունների մասին կոնվենցիան (թիվ 190) և դրան կից Հանձնարարականը (թիվ 206)։ Այս փաստաթղթում ամրագրված է յուրաքանչյուր անձի՝ բռնությունից և ոտնձգություններից զերծ աշխատանքային պայմանների իրավունքը։
Աշխատավայրում բռնությունն ու ոտնձգությունը ոչ միայն վտանգում են աշխատողների ֆիզիկական և հոգեկան բարօրությունը, այլև խաթարում են աշխատանքում արժանապատվության, հարգանքի և հավասարության հիմնարար սկզբունքները։
Արհմիության ներկայացուցիչները կարևոր դեր են խաղում աշխատավայրերում այս վնասակար երևույթները վերհանելու և վերջնականապես վերացնելու հարցում։

Տեսահոլովակը պատրաստվել է շվեյցարական արհմիությունների կոնֆեդերացիայի «Սոլիֆոնդս» հիմնադրամի աջակցությամբ։

Տեսահոլովակը կարող եք դիտել՝ հետևելով հղմանը ***https://rb.gy/1tbnry*** *։*

Առողջության համապարփակ ապահովագրության մասին քննարկում

2024 թվականի դեկտեմբերի 30-ին ՀՀ առողջապահության նախարարությունն Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում շրջանառել է «Առողջության համապարփակ ապահովագրության մասին» ՀՀ օրենքի և հարակից մի շարք օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը։

Հաշվի առնելով աշխատողների համար առողջության համապարփակ ապահովագրության կարևորությունը՝ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի (ՀԱՄԿ) նախաձեռնությամբ 2025 թվականի փետրվարի 14-ին Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նիստերի դահլիճում տեղի է ունեցել «Առողջության համապարփակ ապահովագրության մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ բաց քննարկում, որին մասնակցել են ՀԱՄԿ-ի անդամ ՃՀՄ նախագահներ, տարբեր ոլորտային կազմակերպությունների ներկայացուցիչներ, ՀԱՄԿ-ի մշտական գործող հանձնաժողովների անդամներ։

Նախագիծը ներկայացնելու և պարզաբանումներ տալու նպատակով հրավիրված են եղել ՀՀ առողջապահության նախարարության պետական առողջապահական գործակալության պետ Սամվել Խարազյանը և օրենքի մշակման իրավաբան խորհրդատու Իզաբել Աբգարյանը։

ՀԱՄԿ-ի նախագահի տեղակալ Տիրուհի Նազարեթյանը ամփոփիչ խոսքում նշել է, որ արհմիությունների համար շարունակում է խնդրահարույց մնալ այն կարգավորումը, որ օրենքի նախագծի համաձայն ամսական 13.700 ՀՀ դրամ առողջապահական ապահովագրության պարտադիր վճարի բեռը դրված է միայն աշխատողի վրա։

Գործատուները չեն կրելու որևէ պարտավորություն կիսելու այն կամ համապատասխանաբար վերանայելու աշխատավարձերը։

Արհմիությունները շարունակելու են հանդես գալ բեռի համարժեք և արդար բաշխման հասնելու նպատակով՝ բոլոր հասանելի գործիքակազմերով։

ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁ



ՓՄՁ ասոցիացիայի հեղինակային «Հարկեր, տուրքեր, կրքեր» հաղորդաշարի հյուրն է Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը հյուրընկալվել է ՓՄՁ ասոցիացիայի հեղինակային «Հարկեր, տուրքեր, կրքեր» հաղորդաշարին։
Հաղորդաշարը նվիրված է հետևյալ հարցերի բացահայտմանը.
ի՞նչ արհմիություններ կան,
ի՞նչ գործառույթ են դրանք կատարում,
ինչո՞ւ էին բողոքում ՁՊՄԿ-ում աշխատողները,
ի՞նչ դեր ունեցավ Կոնֆեդերացիան ՁՊՄԿ-ում աշխատողների խախտված իրավունքների վերականգնման համար,
ինչպե՞ս բալանսավորել աշխատանքային իրավունքն ու բիզնեսի իրավունքը,
առողջապահական ապահովագրություն.նոր հարկատեսա՞կ, թե՞ իրապես աշխատող համակարգ։

Հաղորդաշարը կարող եք դիտել՝ հետևելով հղմանը.
https://www.youtube.com/watch?v=iPpzus5zZe0

Աշխատանքային օրվա մեկ ժամով կրճատման նախագծի քննարկում ՀՀ Ազգային Ժողովի աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախաձեռնությամբ



Մարտի 3-ին ՀՀ ԱԺ աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախաձեռնությամբ հանձնաժողովի նախագահ Հերիքնազ Տիգրանյանի, ԱԺ պատգամավորների, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանի, նախարարի տեղակալ Ռուբեն Սարգսյանի, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանի, իրավաբան Աննա Բարիկյանի և Գործատուների հանրապետական միության նախագահ Վահագն Համբարձումյանի մասնակցությամբ տեղի ունեցավ աշխատանքային քննարկում աշխատանքային օրը մեկ ժամով կրճատելու մասին նախագծի վերաբերյալ: ՀՀ ԱՍՀ մշտական հանձնաժողովի նախագահ Հերիքնազ Տիգրանյանը կարևորեց սոցիալական գործընկեր կառույցների հետ քննարկումը, որը հնարավորություն կտա լսելու իրարամերժ կարծիքներ, որոնց քննարկման արդյունքում էլ՝ կլավարկվի օրենքի նախագիծը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանը նշեց, որ նախագծի նպատակն աշխատողների արտադրողականության, աշխատունակության բարձրացումն է, աշխատանքային օրվա կտրվածքով ընտանիք-աշխատանք հարաբերակցության հավասարակշիռ բալանսավորումն է:

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը ներկայացրեց իր փաստահեն դրական դիրքորոշումը:

Միջազգային փորձի օրինակներով գործադիր մարմնի ներկայացուցիչները ներկայացրեցին կոնկրետ երկրների հաջողված փորձի հիման վրա հաստատված վիճակագրական և հետազոտական տվյալները, որոնք փաստում են, որ աշխատաժամանակի կրճատումը դրականորեն է ազդում աշխատողների ֆիզիկական և հոգեկան առողջության և արտադրողականության վրա:

Սոցիալ-տնտեսական մարտահրավերները ՀՀ-ում և Արիմիությունները

Հայաստանի արիմիությունների կոնֆեդերացիան և Հայաստանում Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամը միասին 2025թ. մարտի 13-16-ն իրականացրեցին «Սոցիալ-տնտեսական մարտահրավերները ՀՀ-ում և Արիմիությունները» խորագրով արիմիութենական-սպորտային միջոցառում:
Չորս օրերի ընթացքում ավելի քան 115 արմիութենական մասնակցեցին մերօրյա հայաստանյան սոցիալ-տնտեսական մարտահրավերների վերաբերյալ քննարկումներին:
Առանձին քննարկումներ կազմակերպվեցին «Առողջության համապարփակ ապահովագրության», «Ֆիզիկական անձանց եկամուտների հայտարարագրման», «Երևան քաղաքում հանրային տրանսպորտի թանկացման», «Աշխատավայրում բռնության և ոտնձգության դեմ ԱՄԿ թիվ 190 կոնվենցիայի ներկայացման», «Աշխատանքի աշխարհում անցումների», «Սոցիալ-դեմոկրատական արժեքները ԳԴՀ-ում և ՀՀ-ում թեմաներով» :
Միջոցառման սպորտային մասում մասնակիցները մրցեցին չորս մարզաձևերում՝ շախմատ, սեղանի թենիս, դարթս, բազկամարտ: Մասնակիցները պարգևատրվեցին համապատասխան ֆեդերացիաների նախագահների և սպորտի վաստակավոր գործիչների կողմից:

Միջոցառման ամփոփիչ տեսահոլովակը՝
https://www.youtube.com/watch?v=xk8kPCxFIf4

Առողջության համապարփակ ապահովագրավճարը գնաճի հետ ամեն տարի բարձրանալու է և աշխատող քաղաքացու համար դառնա հավելյալ ֆինանսական բեռ. Արիմիությունների կոնֆեդերացիայի նախագահ

Աշխատող քաղաքացու համար ապահովագրավճարը լինելու է հավելյալ ֆինանսական բեռ: Այս մասին **Tert.am** -ի հետ զրույցում ասաց Հայաստանի արիմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը:
Առողջության համապարփակ ապահովագրության մասին ՀՀ օրենքի նախագիծը **e-draft**-ում դրել էին քննարկման, այժմ հանել են: Այս պահի դրությամբ նախագիծը սաղմնային փուլում է, դեռ պետք է մշակվի:
«Այս պահին էլ դեռ, մեր սուբյեկտիվ կարծիքով, լավարկելու տեղ կա: Եթե դուք ստանում եք **75,000** դրամ աշխատավարձ, կամ **75,000**-ից մինչև **150,000** դրամ, ապա ձեր ամեն ամսվա ապահովագրավճարը կազմելու է **13,700** դրամի **40 %**-ը, մնացած մասը, ըստ այս նախագծի, պետք է վճարի պետությունը, բնականաբար, պետությունն էլ պետք է վճարի ձեր վճարած հարկերից, այսինքն, էլի՛ դուք եք վճարելու, այնպես չէ, որ ձեր փոխարեն ինչ-որ մեկը վճարելու է: Եթե դուք ստանում եք աշխատավարձ՝ **150-300** հազար դրամ, ապա դուք կվճարեք **13,700** դրամի **60 %**-ը, որի մնացած մասը՝ էլի՛ կվճարի պետությունը, այսինքն էլի՛ կվճարեք դուք, որովհետև այդ հարկը դուք եք ձևավորում: Եթե դուք ստանում եք **300** հազար դրամից բարձր աշխատավարձ, ապա ամբողջ **100 %**-ով վճարելու եք դուք, այսինքն այդ դեպքում՝ պետության՝ չակերտավոր օգնությունն էլ չկա»,- նշեց նա:
Մանասերյանի խոսքով՝ աշխարհում առողջության համապարփակ ապահովագրության երեք մոդել կա, որոնցից որևէ մեկը մեր մոդելին մոտ չէ:
«Կա մոդել, որ գործատուն ու աշխատողն են դա համամասնորեն բաժանում, կա մոդել, որ գործատուն է ամբողջությամբ վճարում, կա մոդել, որ վճարում է և՛ գործատուն, և՛ աշխատողը, և՛ պետությունը: Սա դեռ ամենը չէ. քանի որ պետական բյուջեով պետք է պետությունն այդ գումարները վճարի յուրաքանչյուր տարի, այդ գումարը կարող է փոխոխվել, այսինքն միշտ չէ, որ այդ **13,700** դրամն է մնալու ապահովագրավճարը, յուրաքանչյուր տարի պետք է վերանայվի՝ ըստ սպառողական գների ինդեքսի աճի, այսինքն, ըստ եղած գնաճի, այդ գումարն ամեն տարի բարձրանալու է, անկախ նրանից, թե քաղաքացու աշխատավարձը բարձրանալու է, թե՞ ոչ»,-նշեց Մանասերյանը:
Նա դժգոհեց. ինչո՞ւ գործատուների մասով որևէ պարտավորություն չկա աշխատող քաղաքացու համար այն դեպքում, երբ քաղաքացին աշխատավայրում սթրեսի մեջ է, քանի որ քաղաքացին հենց աշխատավայրում է առողջական խնդիրները ձեռք բերում ու բարիք ստեղծում հենց գործատուի համար.
«Չպետք է լինի այնպես, որ դա մարդու համար լրացուցիչ բեռ դառնա: Այն չպետք է լինի այն մեթոդներով, որն այսօր է գրված: Ըստ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ **2023** թվականին մենք ունեցել ենք **23, 7 %** աղքատություն, որոնց մեջ կան նաև աշխատող աղքատներ, եթե մի երկրում քաղաքացին աշխատում, բայց լինում է աղքատ, ապա դա ողբերգություն է: Այսինքն պետությունը աշխատող աղքատի վրա ևս՛ մի հավելյալ բեռ է դնում: Եթե քաղաքացին ստանում է նվազագույն **75,000** դրամ, և ապահովագրավճար է վճարում, իսկ Հայաստանում քիչ չեն նվազագույն աշխատավարձ ստացող մարդիկ՝ հատկապես սպասարկման ոլորտում, ապա նրա համար հավելյալ ֆինանսական բեռ ենք ստեղծում: Ինչո՞ւ նվազագույն աշխատավարձ ստացողի այս վիճակը պետությունը հաշվի չի՛ առնում: Նախագծի այն տեսքը, որով այսօր է, ուղղակի անթույլատրելի է»:
Նախագծում էլի՛ բացեր կան, ասաց Մանասերյանն ու հավելեց. խնդիրներ է տեսնում առողջապահական հիմնարկների ընտրության ձևաչափի մեջ, որոնք կարող են ապահովագրական ծառայություններ մատուցել:
«Մենք պետք է այնպիսի օրինագիծ ունենանք, որը կբացառի ցանկացած կոռուպցիոն ռիսկ, կամ հիմնադրամը, որտեղից որ բաշխվելու են այդ գումարները, կազմում կառավարության անդամներ են, այնտեղ պետք է ներգրավված լինեն նաև գործատուներ, ֆեդերացիայի անդամներ, որ ամեն բան բաց ու թափանցիկ լինի: Բժշկական կազմակերպությունների ծավալն էլ է խնդրահարույց ՝ որոշակի հիվանդությունների մասով: Հիվանդանոցին ընտրելու ճանապարհին արդյո՞ք խնդիրներ չեն առաջանա: Սրանք խնդիրներ են, որոնց մասին հիմա պետք է բարձրաձայնվի, որ հետագայում խնդիրներ չլինեն», - եզրափակեց Մանասերյանը:
Իսկ «Առողջություն և իրավունք» ՀԿ համահիմնադիր, առողջապահության ոլորտի փորձագետ Ծաղիկ Վարդանյանընշեց, որ պետական մասնակցության մասով ճկունություն է ապահովվել միայն. «Եթե նախկինում ապահովագրավճարը բոլորը հարյուր տոկոս վճարելու էին, որից հետո որոշակի շահառուների խմբի հետ էր վերադարձվելու, ապա հիմա պետությունը որոշակի տոկոսներով կփոխհատուցի: Եվ բոնուսների մասով մի նորություն կա. եթե մարդն ամբողջ տարվա ընթացքում, բացի իր կանխարգելիչ զննությունը, չի՛ օգտվել բժշկական ծառայություններից, ապա իրեն բոնուս է հասնելու: Բժշկական առումով մի փոքր անհասկանալի հարցեր կան. օրինակ ասում են, որ այն մարդիկ, ովքեր անցնում են առողջ ապրելակերպի՝ քաշն են նվազեցնում, ծխելն են թողնում, իրենց համար էլ է բոնուս լինելու: Առողջության առաջնային պահպանման օղակի բժիշկը շատ հանգիստ կարող է մանիպուլացնել դուրսգրումները: Կոռուպցիոն ռիսկեր կան՝ յուրայիններին բոնուսային համակարգում առանց հիմքերի ներառելու համար: Դրամարկղում որոշակի բոնուսային գումարներ են լինելու, որը կարող է օգտագործվել ապահովագրավճարն ավելի քիչ օգտագործելու, սպորտային համալիրներ գնալու համար, կարող են գրել՝ այս մարդն էլ չի ծխում, քաշի խնդիր չունի՝ և տան մեկ այլ մարդու: Սա պետք է վերանայվի», -եզրափակեց Վարդանյանը:

Սկզբնաղբյուր՝ Tert.am, https://tert.am/am/news/2025/03/18/insurance/4225515

Առողջության համապարփակ ապահովագրությո՞ւն, թե՞ լրացուցիչ հարկ. նախագծի խութերը

«Առողջության համապարփակ ապահովագրության մասին ՀՀ օրենքի» նախագիծը, որը դեռ վերջերս շրջանառվում էր **e-draft** հարթակում, առաջին հայացքից շատ սպասված ու անհրաժեշտ նախագիծ է, քանի որ ամբողջ աշխարհում ընդունված է ունենալ առողջության համապարփակ ապահովագրություն, որը պիտի ազատի քաղաքացիներին առողջության հետ կապված ֆինանսական ահռելի բեռից։
Սակայն նախագիծը խմբագրումներից հետո էլ դեռեւս պարունակում է խնդրահարույց դրույթներ, որոնց մի մասին անդրադառնամ ստորեւ։ Աշխատողները կվճարեն տարեկան **120.000-164.400** դրամ առողջության ապահովագրության համար, որը յուրաքանչյուր տարի կվերանայվի՝ հաշվի առնելով նաեւ սպառողական գների ինդեքսի կանխատեսվող փոփոխությունները, ինչը, սակայն, երբեք չի արվում նվազագույն աշխատավարձ սահմանելիս։
ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների համաձայն՝ **2023թ.** Հայաստանի Հանրապետությունում աղքատության մակարդակը կազմել է **23.7%**։ Աղքատների շրջանում կան նաեւ աշխատող աղքատներ, ովքեր, անգամ աշխատանք ունենալով, չեն կարողանում ապահովել իրենց եւ իրենց ընտանիքի անդամների նվազագույն պահանջմունքները, քանի որ Հայաստանի Հանրապետությունում նվազագույն աշխատավարձ սահմանելիս հաշվի չեն առնվում աշխատողի եւ նրա ընտանիքի պահանջմունքները։
Ստեղծված սոցիալ-տնտեսական պայմաններում, երբ բարձրացվում են հանրային տրանսպորտի, աղբահանության գները եւ գույքահարկը, առողջության ապահովագրության վճարը լրացուցիչ բեռ է դառնալու աշխատողների համար, ինչը բացասական ազդեցություն կունենա նրանց եկամուտների վրա, հատկապես, այն աշխատողների, ովքեր արդեն նվազագույն եկամուտներով փորձում են դիմագրավել թանկացումներին, ինչը չի բխում ՀՀ Սահմանադրության **1**-ին հոդվածի պահանջից, այն է. «Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է»։
Որպես սոցիալական եւ իրավական պետության հիմնական բաղադրիչ՝ պետք է առանձնացնել մարդկանց սոցիալական պաշտպանվածության եւ բարեկեցության համար օրենսդրական երաշխիքների ապահովումը։ Խնդրահարույց է, որ նախագծի համաձայն՝ առողջապահական ապահովագրության պարտադիր վճարի բեռը դրված է հիմնականում աշխատողի վրա։
Նախագծով առողջության համապարփակ ապահովագրության ենթակա են՝ ի թիվս այլոց, «վարձու աշխատողները» (ՀՀ աշխատանքային օրենսգրքում «վարձու աշխատող» եզրույթ չկա)։ Ապահովագրավճարների ամսական հաշվարկման բազա է համարվում գործատուների կողմից վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձանց համար հաշվարկված աշխատավարձը, իսկ տարեկան հաշվարկման բազա է համարվում՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակում աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման դիմաց ստացված եկամուտը, հարկային գործակալ չհանդիսացող անձանցից ստացվող աշխատավարձը, վարձակալական վճարը, շահաբաժինը, ռոյալթին, տոկոսը։
Հանուն արդարության նշեմ, որ աշխատողները կվճարեն՝ **1)** ապահովագրավճարի **40%**-ը, եթե սահմանված ապահովագրավճարի հաշվարկման բազան փոքր է կամ հավասար է նվազագույն աշխատավարձի կրկնապատիկին (մինչեւ **150.000** դրամ աշխատավարձ ստանալու դեպքում), **2)** ապահովագրավճարի **60%**-ը, եթե սահմանված ապահովագրավճարի հաշվարկման բազան փոքր է կամ հավասար նվազագույն ամսական աշխատավարձի քառապատիկին, սակայն մեծ է նվազագույն աշխատավարձի կրկնապատիկից (**150.000** դրամից ավելին, բայց **300.000** դրամից պակաս աշխատավարձ ստանալու դեպքում), **3)** ապահովագրավճարի հարյուր տոկոսը, եթե սահմանված ապահովագրավճարի հաշվարկման բազան մեծ է նվազագույն աշխատավարձի քառապատիկից (**300.000** դրամից ավելի աշխատավարձ ստանալու դեպքում)։
Այսինքն՝ յուրաքանչյուր աշխատող ամսական դեռեւս վճարելու է **4.000-13.700** ՀՀ դրամ։ Գործատուները չեն կրելու որեւէ պարտավորություն բաշխելու նշված գումարը կամ համապատասխանաբար վերանայելու աշխատավարձերը։ Մինչդեռ, աշխատանքի վայրում աշխատողները ենթարկվում են տարբեր ռիսկերի, որոնք կարող են ազդել նրանց առողջության վրա։ Եվրոպական մի շարք երկրներում՝ Գերմանիայում, Ավստրիայում, Ֆրանսիայում, Բելգիայում, Շվեյցարիայում աշխատողների առողջության ապահովագրության համար պարտադիր վճարումներ կատարվում է նաեւ գործատուների կողմից։
Գործատուների մասնակցությունն այս համակարգում կնպաստի աշխատողների ֆինանսական ծանրաբեռնվածության նվազմանը եւ սոցիալական արդարության ապահովմանը։ Համակարգի առողջ ու տրամաբանական ներդրմանը զուգահեռ գործընթացը պետք է ուղեկցվի համակարգային բարեփոխումներով՝ աշխատավարձի ինդեքսավորման մասին օրենքի, գործատուների, պետության եւ աշխատողների կողմից մասնակցության բեռի համարժեք եւ արդար բաշխմամբ։ Այլապես այն լրացուցիչ հարկ է աշխատողների համար։

ԷԼԵՆ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ

Նյութի աղբյուրներ՝ ***ORAGIR.NEWS, aravot.am:***

https://www.aravot.am/2025/03/14/1475145/

Ոչ ֆորմալ տնտեսությունում աշխատողների կազմակերպման վերաբերյալ քառօրյա վերապատրաստման դասընթաց

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան (ՀԱՄԿ) Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) ֆինանսական աջակցությամբ 2025թ. մարտի 20-23-ը քաղաք Ծաղկաձորում կազմակերպել էր վերապատրաստման դասընթաց ոչ ֆորմալ տնտեսությունում աշխատողների կազմակերպման վերաբերյալ ՀԱՄԿ-ին անդամակցող ճյուղային հանրապետական կազմակերպություններին անդամակցող արհմիութենականների համար։

Հիմնական դասընթացը վարում էր Լիտվայի Հանրապետության «Սոլիդարումաս» արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Քրիստինա Կրուպավիչենեն։

Քառօրյա դասընթացին մասնակցում էին նաև ԱՄԿ տարածաշրջանի աշխատողների հարցերով գլխավոր մասնագետ Գոչա Ալեքսանդրիան, ԱՄԿ Բուդապեշտի գրասենյակի գենդերային հավասարության և խտրականության բացառման գծով մասնագետ Օզգե Բերբերը, ԱՄԿ ազգային համակարգող Նունե Հովհաննիսյանը և ՀԱՄԿ-ի նախագահ Էլեն Մանասերյանը։

ՀԱՄԿ-ի նախագահի տեղակալ Տիրուհի Նազարեթյանը ներկայացրեց Հայաստանում ոչ ֆորմալ տնտեսությունը, առկա իրավիճակը, խնդիրները։

Մասնակիցներին ներկայացվեց նաև ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրությունը, ԱՄԿ թիվ 189 կոնվենցիան և միջազգային այլ գործիքներ։

ՀԱՄԿ-ի նախագահը ներկայացրեց սոցիալական գործընկերության իրավիճակը ՀՀ-ում, առկա մարտահրավերները, ՀԱՄԿ-ի վերջին շրջանում ձեռքբերումները։

Մասնակիցները ծանոթացան կազմակերպելու, հաղորդակցման հմտություններին խմբային աշխատանքների, դերախաղերի միջոցով, ծանոթացան նաև Լիտվայի արհմիությունների փորձին։

Դասընթացի ավարտին աշխատանքային խմբերը ներկայացրին իրենց պատկերացումները տնային աշխատողների, շինարարության և ագրոարդյունաբերության ոլորտների աշխատողների շրջանում հետագա աշխատանքների կազմակերպման վերաբերյալ։

Շվեդ գործընկերների այցը Հայաստանի արհմիությունների կոֆեդերացիա

Մարտի 31-ին Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը հյուրընկալեց Շվեդիայի զբաղվածության պետական ծառայության ծրագրերի ղեկավար Պեր Լինդբերգին, Շվեդիայի միգրացիոն գործակալության Միջազգային զարգացման համագործակցության բաժնի ղեկավար Կարլ-Մարտին Անդերսոնին, թվային ծառայությունների ավագ խորհրդատու Էլեն Բլանկին և խորհրդատու Ջոակիմ Էնգերին:
Միջազգային զարգացման համագործակցության բաժնի ղեկավար Կարլ-Մարտին Անդերսոնը շնորհակալություն հայտնեց հյուրընկալելու համար և ներկայացրեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Միասնական սոցիալական ծառայության հետ իրականացվելիք ծրագրի մանրամասները:
Առանձնահատուկ կարևորելով Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի դիրքորոշումը ծրագրի ավարտին ակնկալվող վերջնարդյունքների վերաբերյալ՝ Կարլ-Մարտին Անդերսոնը հատկապես ընդգծեց այն փաստը, որ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի հետ հանդիպումն առաջինն է սոցիալական գործընկերների հետ հետագա հանդիպումների շարքում:
Հանդիպմանը ներկա էր նաև բռնի տեղահանված, փախստականի կարգավիճակ ունեցող աշխատողների «Վերածնունդ» արհեստակցական կազմակերպության աշխատանքների համակարգող Արա Ղահրամանյանը, ով խոսեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից բռնի տեղահանված անձանց համար աշխատաշուկա ինտեգրման ճանապարհին առկա հիմնական խնդիրների և մասնագիտական որակավորումների տարբերությունների մասին:
Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը շնորհակալություն հայտնեց հյուրերին Հայաստանի Հանրապետության աշխատող քաղաքացու համար առավել բարենպաստ աշխատանքային պայմաններին ուղղված աշխատանքների և նման նախաձեռնության համար՝ հույս հայտնելով, որ նման հանդիպումներով և համատեղ աշխատանքով կանենք հնարավորինս՝ ի նպաստ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից բռնի տեղահանված անձանց աշխատանքային պայմանների:



ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁ

Եվրամիություն-Հայաստան քաղհասարակության պլատֆորմի 6-րդ երկկողմ հանդիպում

Ապրիլի 1-ին Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան հյուրընկալել է Եվրոպական միություն-Հայաստան քաղաքացիական հասարակության պլատֆորմի հերթական 6-րդ հանդիպումը:
Հանդիպմանը բացման խոսքով են հանդես եկել Պլատֆորմի համանախագահներ «Իրավունքի Եվրոպա միավորում» ՀԿ նախագահ Լուսինե Հակոբյանն ու Տնտեսական և սոցիալական եվրոպական կոմիտեից Սիմոն Տիայնենը:
Ողջույնի խոսքով է հանդես եկել Եվրոպական սոցիալ-տնտեսական հանձնաժողովի արտաքին հարաբերությունների բաժնի ղեկավար Դիմիտրիս Դիմիտրիադիսը: Պարոն Դիմիտրիադիսը, մասնավորապես, ողջունել է Եվրամիությանը Հայաստանի անդամակցության գործընթացի մեկնարկի մասին օրենքի ընդունումը՝ նշելով, որ Եվրոպական Միությունը կարիք ունի Հայաստանի պես անդամների, միաժամանակ ընդգծել, որ Հայաստանը լուրջ աշխատանք ունի կատարելու այդ ճանապարհին:
Հայաստանի և Եվրամիության միջև ստորագրված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) իրականացման վերաբերյալ գնահատականներով ելույթներ են ունեցել Հայաստանում Եվրամիության պատվիրակության ղեկավար, դեսպան Վասիլիս Մարագոսը, ՀՀ ԱԺ Եվրահինտեգրման հանձնաժողովի նախագահ Արման Եղոյանը, ՀՀ ԱԳՆ Եվրոպայի բաժնի ղեկավար Սամվել Մկրտչյանը, Եվրոպական հանձնաժողովի Ընդլայնման և Արևելյան հարևանության գլխավոր տնօրինության Վրաստանի, Հարավային Կովկասի բաժնի ղեկավար Դեյվիդ Քալլենը: Պարոն Քալլենը, մասնավորապես, երկու կարևոր ուղերձ է փոխանցել քաղհասարակությանը և իշխանությանը: Իշխանությանը կոչ է արել սահմանել այն առաջնահերթությունները, որոնց շուրջ Եվրոպական Միությունը պետք է օժանդակի Հայաստանին, իսկ քաղհասարակությանը կոչ է արել ի լրումն Եվրոպական Միության անդամակցության առավելությունների, ներկայացնել նաև թե ինչ պարտավորություններ է ենթադրում Հայաստանի համար ԵՄ-ի անդամակցությունը:
Օրենքի գերակայության, կոռուպցիայի դեմ պայքարի, մարդու իրավունքների և անվտանգության հարցերով ՀԸԳՀ ներդրման թեմայով զեկուցումներով հանդես են եկել ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Աննա Կարապետյանը, ՀՀ ներքին գործերի նախարարի տեղակալ Արմեն Ղազարյանը, Իրավաբանների հայկական ասոցիացիայի ներկայացուցիչ Սյուզաննա Սողոմոնյանը, «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ ներկայացուցիչ Հասմիկ Հարությունյանը, «Ազատ քաղաքացի» ՀԿ նախագահ Հովսեփ Խուրշուդյանը: Ելույթներին հետևել է բարձրաձայնված թեմաների վերաբերյալ քննարկում:
Սոցիալական երկխոսություն և աշխատանքային իրավունքներ թեմայով զեկուցումներով հանդես են եկել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ռուբեն Սարգսյանը, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի փոխնախագահ Տիրուհի Նազարեթյանը, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի իրավաբան Աննա Բարիկյանը:
Արդյունաբերական և ձեռնարկատիրական քաղաքականության,արդյունաբերության մեջ ՓՄՁ-ների դերակատարության ակտիվացման, այդ համատեքստում բիզնեսի հետ երկխոսության թեմաներով զեկուցումներ են ունեցել ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Լիլյա Սիրականյանը, Գործատուների հանրապետական միությունից ընտրված Պլատֆորմի անդամ Գագիկ Մակարյանը, Արդյունաբերողների և գործարարների միության փոխնախագահ Ներսես Կարամանուկյանը, Իտալիայի արհեստավորների կոնֆեդերացիայի գլխավոր տնօրեն, Եվրոպական տնտեսական և սոցիալական հանձնաժողովի արդյունաբերական փոփոխությունների հարցերով խորհրդատվական հանձնաժողովի նախագահ Ֆրանչեսկո Պիետրո դե Լոտտոն:

ԵՄ - ՀՀ Քաղհասարակության պլատֆորմի 6-րդ Հռչակագիրը

ԵՄ - Հայաստան Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) կատարման և ընդհանրապես ԵՄ-Հայաստան հարաբերությունների առաջընթացի կապակցությամբ, ԵՄ-Հայաստան քաղհասարակության պլատֆորմը.

1. Ողջունում է ՀՀ ազգային ժողովի կողմից «Եվրոպական Միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցելու գործընթացի մեկնարկի մասին» օրենքի ընդունումը, որը ներկայացրել էր «Եվրաքվե» քաղաքացիական նախաձեռնությունը 60 000 քաղաքացիների ստորագրահավաքից հետո, և սույն օրենքի արդյունավետ կիրարկման նպատակով՝ կոչ է անում ՀՀ կառավարությանը և ԵՄ-ին համաձայնության գալ օրենքի իրականացման իրագործելի ճանապարհային քարտեզի շուրջ, այդ թվում՝ ստեղծելով Վարչապետի գլխավորությամբ ոլորտային նախարարներից կազմված միջգերատեսչական հանձնաժողով.
2. Միևնույն ժամանակ, կրկնում է ՀՀ իշխանություններին ուղղված իր կոչը հնարավորինս սեղմ ժամկետներում սպառիչ կերպով կատարել ՀԸԳՀ-ի շրջանակներում դեռևս չկատարված պարտավորությունները՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀԸԳՀ-ը ոչ միայն երկու գործընկերների միջև կնքված շրջանակային համաձայնագիր է, այլ առաջին հերթին՝ ուժեղ խթան Հայաստանի իրական ժողովրդավարացման և ապագա ԵՄ անդամակցության համար.
3. Հաշվի առնելով ԵՄ և ՀՀ կողմից ՀԸԳՀ-ի շրջանակներում թե՛ տարածաշրջանային, թե՛ միջազգային մակարդակներում խաղաղությունն ու կայունությունը խթանելու, պահպանելու և ամրապնդելու ուղղությամբ ստանձնած հանձնառությունը՝ ողջունում է Ադրբեջանի հետ խաղաղության համաձայնագրի ձեռքբերման հնարավորությունը. լիովին գիտակցելով այս գործընթացի զգայունությունը՝ կոչ է անում ՀՀ արտաքին գործերի նախարարությանը խորհրդակցել Հայաստանի քաղաքացիական հասարակության հետ՝ Ադրբեջանի հետ խաղաղության համաձայնագրի տեքստի վերաբերյալ. կոչ է անում ԵՄ-ին մեծ դիվանագիտական ճնշում գործադրել Ադրբեջանի վրա, խաղաղության համաձայնագրի ստորագրման և դրա դրույթների պահպանման նպատակով՝ զերծ մնալով փոխհամաձայնեցված տեքստում լրացուցիչ պահանջներ ավելացնելուց.
4. Կոչ է անում ԵՄ-ին Ադրբեջանի նկատմամբ գործադրել ցանկացած հնարավոր լծակ՝ վերջ դնելու հայ պատանդների, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի բարձրաստիճան քաղաքական ներկայացուցիչների անօրինական կալանմանը և կեղծ դատավարություններին՝ Եվրոպական խորհրդարանի RC-B10-0182/2025 բանաձևին համապատասխան.
5. Ողջունում է ԵՄ անդամ պետությունների և նրանց դաշնակիցների որոշումը համախմբվել վերջերս տեղի ունեցած գլոբալ քաղաքական զարգացումների ֆոնին, որոնք նպաստել են հակաեվրոպական տրամադրությունների և ապատեղեկատվության տարածմանը, ինչը հաճախ զուգորդվում է կապիտալակենտրոն և ուժի վրա հիմնված աշխարհակարգին սատարող տրամադրություններով, ինչպես նաև Եվրոպայում և աշխարհում անվտանգության նվազման զգացումով: Մասնավորապես, նման դժվարին ժամանակներում ԵՄ անդամ պետությունների և ՀՀ կառավարություններին կոչ է անում ավելի մեծ ակտիվությամբ և հետևողականությամբ հանձնառու լինել՝ խորացնելու հարաբերությունները և լիարժեքորեն իրականացնելու եվրոպական օրակարգին համահունչ բարեփոխումներ՝ նոր ձևավորվող եվրոպական ընդհանուր անվտանգության տարածքում ընդգրկվելու ցանկություն հայտնելով.
6. Խորը մտահոգությամբ է հետևում տեխնիկական և ֆինանսական աջակցության ոլորտում ահագնացող բացին, որը զուգորդվում է ազատական ժողովրդավարական արժեքների մասին տեղեկատվական և գաղափարական հանրահռչակման ծավալների կրճատմամբ, ինչն էլ ավելի է վատթարանում ԱՄՆ-ում և ԵՄ անդամ մի շարք երկրներում ծավալվող վերջին զարգացումների ֆոնին: Այս իրավիճակը պարարտ հող է ստեղծում աշխարհում, այդ թվում և ԵՄ-ի հարևանության տարածքում Ռուսաստանի և Չինաստանի ազդեցության մեծացման համար: Մենք կոչ ենք անում ԵՄ-ին, նրա անդամ պետություններին և եվրոպական կառույցներին համագործակցության և օգնության միջոցով մեծացնել իրենց միջազգային ներկայությունը՝ այդպիսով հակազդելով հակաազատականության ընդլայնվող միջավայրի միտումներին.
7. Կրկնում է, որ ցանկացած երկրում ժողովրդավարության արդյունավետ և կայուն զարգացումն ու ներդրումը հնարավոր է միայն խաղաղության, անվտանգության և կայունության պայմաններում. այս առումով, նկատում է, որ անհրաժեշտ է մեծացնել ճնշումն ու դիվանագիտական ազդեցությունն Ադրբեջանի վրա, որպեսզի այն ձեռնպահ մնա ապագայում Հայաստանի դեմ ռազմական ագրեսիայից և երկրի ներսում ռազմական հռետորաբանության ծավալումից.
8. Շարունակում է սերտորեն հետևել ՀՀ և ԵՄ միջև մուտքի վիզայի ռեժիմի ազատականացման երկխոսությանը և ՀՀ քաղաքացիների՝ ապագայում առանց վիզայի ԵՄ ճանապարհորդելու համար կարևոր ԵՄ հենանիշերին համապատասխանեցման գործընթացին՝ կապված փաստաթղթերի անվտանգության, սահմանների և միգրացիայի կառավարման, տվյալների պաշտպանության, կոռուպցիայի և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի և հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանության հետ: Սրա լույսի ներքո, կոչ է անում Հայաստանի իշխանություններին, այդ թվում՝ Ազգային ժողովին, ապահովել Պլատֆորմի շարունակական ներգրավվածությունը վիզաների ազատականացման երկխոսության գործընթացում.
9. Գնահատում է ՀՀ-ի անվտանգության համար ԵՄ դիտորդական առաքելության կարևոր դերը ՀՀ տարածքի վրա ադրբեջանական հարձակումների թվի նվազեցման գործում և ողջունում է 2025 թվականից հետո նրա մանդատի երկարաձգումը. ողջունում է ԵՄ-ի կողմից՝ ՀՀ-ին լրացուցիչ աջակցություն ցուցաբերելու պատրաստակամությունը «Եվրոպական խաղաղության գործիքի», ինչպես նաև Հայաստանի պաշտպանունակության ամրապնդմանն ուղղված այլ երկկողմ նախաձեռնությունների շրջանակներում.

10. Ողջունում է Հայաստանի և ԵՄ-ի միջև բանակցությունները համագործակցության նոր օրակարգի շուրջ, ներառյալ քաղաքացիական հասարակության, այդ թվում՝ ԵՄ – Հայաստան ՔՀՊ-ի հետ ՀՀ արտաքին գործերի նախարարության նախաձեռնած կանոնավոր խորհրդակցությունների գործընթացը. կրկնում է քաղաքացիական հասարակությանը փաստաթղթի տեքստը ներկայացնելու մասին իր կոչը, որպեսզի վերջինիս առաջարկությունները հաշվի առնվեն մինչև վերջնական փաստաթղթի ստորագրումը.

11. Նշում է, որ ՀԸԳՀ-ի վերաբերյալ խորհրդատվությունը և ՀՀ կառավարության կողմից ՀԸԳՀ-ի կատարման և առաջարկվող ԵՄ-Հայաստան համագործակցության արդիականացված օրակարգի մշտադիտարկումը շարունակելու համար ԵՄ-Հայաստան քաղաքացիական հասարակության պլատֆորմին անհրաժեշտ կլինի շարունակական աջակցություն, այդ թվում՝ Եվրոպական հանձնաժողովի և ՀՀ կառավարության ուղղակի ֆինանսավորման միջոցով. անհանգստություն է հայտնում այս Պլատֆորմի անբավարար ֆինանսավորման առնչությամբ, ինչը խոչընդոտել է դրա լիարժեք ներուժի իրացմամբ գործառնությանը 2024թ.

12. Շեշտում է իշխանությունների և ՔՀՊ անդամների միջև ներգրավվածության, խորհրդակցությունների և տեղեկատվության փոխանակման բարելավման առանցքային նշանակությունը: Առաջարկում է ՔՀՊ անդամներին շնորհել մշտական կամ առնվազն դիտորդի կարգավիճակ ՀԸԳՀ-ի կատարման համար պատասխանատու Միջգերատեսչական հանձնաժողովի շրջանակներում.

13. Մտահոգված է կատարման տեմպերով և մեծապես խրախուսում է ջանքերի ակտիվացումը՝ ապահովելու Կառավարության կողմից պետական կառավարման ոլորտի բարելավմանն ուղղված ռազմավարություններում, այդ թվում՝ հակակոռուպցիոն, դատական և իրավական համակարգերի, մարդու իրավունքների պաշտպանության, իրավապահ համակարգի, քրեակատարողական և պրոբացիոն ծառայությունների և այլնի առնչությամբ ուրվագծված պարտավորությունների լիովին, արդյունավետ և սահմանված ժամկետներում կատարումը.

14. Անհանգստություն է հայտնում Հռոմի կանոնադրության ներքո երկրի պարտավորությունների կատարման ուղղությամբ ՀՀ իշխանությունների կողմից ձեռնարկվող քայլերի տեմպերով. թեև Կառավարությունը պարտավորություն էր ստանձնել 2024 թվականին կիրարկել Հռոմի ստատուտը՝ «Քրեական դատարանի հետ համագործակցության մասին» օրենքի նախագիծ մշակելով, Արդարադատության նախարարի փոփոխության արդյունքում որոշվեց ՄՔԴ-ի հետ համագործակցության մասին դրույթները ներառել «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» գործող օրենքում. այնուամենայնիվ, մինչ օրս Հռոմի կանոնադրությունը ներպետական մակարդակով կիրարկող օրենսդրություն չի ընդունվել.

15. Կոչ է անում իշխանություններին թույլ չտալ Բարձրագույն դատական խորհրդի կողմից ընտրովի նշանակումները և ձեռնարկված կարգապահական վարույթի շրջանակներում ընտրովի արդարադատությունը, ինչպես նաև շտկել դատավորների նշանակման գործընթացում բարեվարքության ստուգումների բացասական արդյունքները պատշաճ կերպով հաշվի չառնելը.

16. Թեև նկատելի են կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ ՀՀ կառավարության ջանքերը, մի շարք խնդրահարույց հարցեր դեռ մնում են չլուծված. թեև հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ շրջանակը հիմնվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի, Հակակոռուպցիոն կոմիտեի, դատախազության մասնագիտացված ստորաբաժանումների և եռաստիճան հակակոռուպցիոն դատական համակարգի ձևավորմամբ ստեղծմամբ, լուրջ մտահոգություններ կան այդ հակակոռուպցիոն մարմինների անկախության, կադրերի ընտրության գործընթացների, տեխնիկական սարքավորումների և աշխատանքային ռեսուրսների անբավարարության առնչությամբ.

17. Հույս է հայտնում առ այն, որ առաջիկա կարճ ժամանակահատվածում ապօրինի գույքի բռնագանձման ինստիտուտի բարելավման ուղղությամբ աշխատանքները կսկսվեն բոլոր իրավասու մարմինների, այդ թվում՝ ՀՀ արդարադատության նախարարության, Ազգային ժողովի և Սահմանադրական դատարանի մասնակցությամբ՝ Վենետիկի հանձնաժողովի խորհրդատվական եզրակացության լույսի ներքո.

18. Բացի դրանից, մասնավոր հատվածում կոռուպցիոն խոցելիությունները և պետական գնումները շարունակում են մտահոգության տեղիք տալ: Բիզնես միջավայրը շարունակում է բախվել բարեվարքության հետ կապված մարտահրավերներին, մինչդեռ պետական ֆինանսական ծախսերի անբավարար վերահսկողությունը շարունակում է խնդրահարույց ոլորտ լինել, որին հարկ է ուշադրություն դարձնել.

19. Մտահոգությամբ է նկատում ոստիկանության կողմից անհամաչափ ուժի կիրառման շարունակական պրակտիկան և մարդու իրավունքների խախտումների արդյունավետ քննության բացակայությունը.

20. Ողջունում է տեխնիկական ընթացակարգին համապատասխանությունը, որը հանգեցրել է Հայաստանին ԵՄ անդամ երկրներ բարձրորակ ջրային կուլտուրաներ՝ ձկնաբուծական արտադրանք արտահանումների համար տրված թույլտվությանը, ըստ Եվրոպական հանձնաժողովի 2025/354 (ԵՄ) կանոնակարգի՝ երկրի տնտեսական դիվերսիֆիկացման նախանշվող քաղաքականությանը համահունչ.

21. Ցավով է նշում, որ Հայաստանում ճանապարհատրանսպորտային պատահարների հետևանքով մահացությունները շարունակում են ամենաբարձր մակարդակի վրա լինել եվրոպական և Արևելյան հարևանության երկրների շրջանում, և անհապաղ կոչ է անում ակտիվացնել ջանքերը՝ ճանապարհային և տրանսպորտային միջոցների անվտանգության ընդհանուր չափորոշիչներն էականորեն բարելավելու նպատակով.

22. Ի գիտություն է ընդունում Հայաստանի տրանսպորտային ոլորտի քաղաքականության ընթացիկ բարեփոխումները, սակայն կոչ է անում ավելի արագ ընդունել ՀԸԳՀ-ի այն դրույթները, որոնք ուղղված են տրանսպորտային միջոցներից արտանետումների նվազեցմանը, տրանսպորտային միջոցների կանոնավոր և արդյունավետ ստուգումների իրականացմամբ՝ ներառելով չնախատեսված ճանապարհային ստուգումները, բարելավելով վտանգավոր նյութերի տեղափոխման կանոնակարգերը և սահմանելով վարորդների համար սոցիալ-տնտեսական և աշխատանքային պայմանների գործնական և խիստ վերահսկողություն.

23. Ցավով եզրակացնում է, որ չնայած արհմիությունների և ՔՀՊ-ի բազմաթիվ նախկին կոչերին, ոչ մի առաջընթաց չի գրանցվել այնպիսի ինստիտուցիոնալ և իրավական դաշտի ստեղծման հարցում, որը կապահովեր աշխատողների՝ խորհրդակցությունների և բանակցությունների իրավունքը: Սա վերաբերում է բոլոր ոլորտների համար պարտադիր իրավական ուժ ունեցող և բովանդակալից ազգային եռակողմ կառուցակարգի, հատուկ պետական հատվածի աշխատողների համար երկկողմ կառուցակարգի և ընդհանրապես արհմիությունների բանակցելու իրավունքների ամրապնդման բացակայությանը: Արդյունավետ սոցիալական երկխոսությունն ամենակարևոր միջազգային չափորոշիչներից է, որի իրականացման տեմպը ներկայումս հետ է մնում, որը, սակայն, էական է քաղաքականության բարեփոխումների մեծ մասում կայունության և ժողովրդավարական լեգիտիմության ապահովման համար.

24. Ընդգծում է պետության՝ ՀՀ կառավարության Գործողությունների ծրագրով և ռազմավարական այլ փաստաթղթերով սահմանված այնպիսի հանձնառության բացակայությունը, որն ուղղված կլիներ կենտրոնական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում աշխատողների կազմակերպությունների անկախության պաշտպանությանը և դրանց զորեղացմանը.

25. Ընդգծում է, որ ՀԸԳՀ-ի՝ զբաղվածությանը վերաբերող առավել համապարփակ դրույթները, մասնավորապես աշխատանքի անվտանգությանը և առողջությանը (ԱԱԱ) վերաբերող պարտավորությունները մնում են չկատարված, ընդ որում՝ դրանց կատարման համար հստակ ժամկետներ սահմանված չեն: Հաշվի առնելով այն, որ ՀԸԳՀ-ի դրույթների մեծ մասը պետք է ամբողջությամբ իրականացվեն մինչև 2028թ. վերջը, պարտադիր է անհապաղ սկսել ԱԱԱ բարեփոխումները, որոնք կուղեկցվեն հստակ, լավ մշակված ճանապարհային քարտեզով՝ ժամանակին և արդյունավետ իրականացում ապահովելու համար.

26. Եվս մեկ անգամ կրկնում է, որ անօրինական զբաղվածությունը (առանց աշխատանքային պայմանագրի աշխատանքը) շարունակում է Հայաստանում աշխատանքային ոլորտի հիմնական խնդիրներից լինել, մինչդեռ կարգավորումներին համապատասխանությունը ստուգող մարմինները, հատկապես Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը, նման խախտումների դեմ պայքարում դեռևս արդյունավետ չեն, նույնիսկ երբ քաղաքացիները հստակ հաղորդում և փաստաթղթավորում են այդ խախտումները: Հորդորում է էականորեն բարեփոխել վերահսկողության և ստուգումների իրավական և գործառնական այն շրջանակները, որոնք էական նշանակություն ունեն համակարգային կոռուպցիայի և տարբեր ոլորտներում զբաղվածության ոչ ֆորմալ աշխատակարգերի դեմ պայքարելու համար.

27. Ողջունում է սոցիալական խթանման մի շարք այնպիսի միջոցները, որոնք Կառավարությունը վերջերս է ներդրել եկամտային հարկի վերադարձի սխեմաների միջոցով. այնուամենայնիվ, ընդգծում է աշխատավարձի որոշման արդար, թափանցիկ և ապացույցների վրա հիմնված կառուցակարգի ներդրման անհրաժեշտությունը: Ավելին, նվազագույն աշխատավարձի ճշգրտումը կարևոր է, որպեսզի ստույգ արտացոլի իրական կյանքի սպառման պահանջները և սահմանի կենսապահովման համար իսկապես համարժեք աշխատավարձը: Այս համատեքստում մենք առաջարկում ենք լրացուցիչ եվրոպական չափորոշիչների, մասնավորապես «Համարժեք նվազագույն աշխատավարձի մասին» ԵՄ դիրեկտիվն ընդունելու հանձնառություն ստանձնել՝ այս հանձնառությունը հավանաբար նաև Համագործակցության նոր օրակարգում ներառելով.

28. Կարևորում է Հայաստանում ինստիտուցիոնալ և բովանդակալից սոցիալական երկխոսությունը՝ արդյունավետ և կառուցողական կերպով լուծելու սոցիալական և աշխատանքային մարտահրավերներն ազգային եռակողմ հանձնաժողովի շրջանակներում, այդ թվում՝ աշխատաժամանակի կրճատման բարեփոխումը, աշխատանքի անվտանգության և առողջության (ԱԱԱ) չափորոշիչների ընդունումը, ինչպես նաև Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) Արժանապատիվ աշխատանքի օրակարգի այլ հիմնասյուները, այդ թվում՝ ՀԸԳՀ-ի 84-րդ և 274-րդ հոդվածներով նախատեսված ԱՄԿ 116-րդ հանձնարարականը և աշխատանքի միջազգային չափորոշիչները.

29. Նկատում է, որ անցած տարվա ընթացքում Կառավարության կողմից նախաձեռնված մի շարք սոցիալական բարեփոխումներ զգալի դիմադրություն և հասարակական լարվածություն են առաջացրել՝ հիմնականում այս բարեփոխումների հիմքում ընկած հիմնավորումների շուրջ ոչ պատշաճ հաղորդակցության պատճառով. կարծում է, որ այս խնդրի հիմնական պատճառը շահագրգիռ կողմերի և սոցիալական գործընկերների միջև պատշաճ, բովանդակալից և ներառական խորհրդակցությունների բացակայությունն է. վերահաստատում է արդյունավետ և կառուցողական սոցիալական երկխոսության, փորձի և վերլուծությունների փոխանակման և քաղաքականության մշակման վաղ փուլերում հաստատված միջազգային փորձի պատշաճ կիրառման կարևորությունը՝ դրանով իսկ կանխելու ապագա ձախողումները և հասարակական պառակտումները.

30. Ընդգծում է ՓՄՁ կայուն աճի և զարգացման կարևորությունը ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում. հետևաբար, ՓՄՁ զարգացման նոր ռազմավարությունը պետք է կենտրոնանա մարզերում ՓՄՁ աճի վրա՝ ապահովելով ՓՄՁ-ների համար անհրաժեշտ ենթակառուցվածքների և աջակցության գործիքների ստեղծումը, քանի որ տնտեսական ակտիվությունը մեծամասամբ շարունակում է կենտրոնացած մնալ Երևանում: Արդյունաբերության ոլորտում ՓՄՁ-ների անբավարար ներգրավվածությունը հանգեցնում է արտահանման թույլ դիվերսիֆիկացմանը և ԵՄ արժեշղթաներին դանդաղ ինտեգրմանը, ինչի համար շուկա մուտք գործելու ավելի ագրեսիվ ռազմավարություն է պահանջվում:

31. Նկատում է, որ Հայաստանի Հանրապետությունը շոշափելի առաջընթաց է գրանցել ՀԸԳՀ-ի 5-րդ գլխի իրականացման հարցում՝ կարգավորումներում արվող բարեփոխումների, ՓՄՁ աջակցության ծրագրերի և ԵՄ չափորոշիչներին համապատասխանեցնելու միջոցով: Այնուամենայնիվ, հարատևող մարտահրավերներին, օրինակ՝ ֆինանսներին անհասանելիությանը, տարածաշրջանային անհավասարությանը և ինստիտուցիոնալ առումով թույլ կողմերին արձագանքելու համար լրացուցիչ կայուն ջանքեր են պահանջվում: Ինչ վերաբերում է նորմատիվ կարգավորումների համապատասխանեցմանը, լրացուցիչ ջանքեր են անհրաժեշտ ԵՄ չափորոշիչներն (օրինակ՝ շրջակա միջավայրի, անվտանգության նորմերի վերաբերյալ) ամբողջությամբ ընդունելու համար, մասնավորապես՝ արտադրական ոլորտների առնչությամբ:

Աղբյուր՝ https://rb.gy/ge1rk3

Ֆրանսիայի Աշխատանքի ընդհանուր կոնֆեդերացիայի պատվիրակության այցը Սյունիքի և Արմավիրի մարզ

Ապրիլի 2-3-ը Ֆրանսիայի Աշխատանքի ընդհանուր կոնֆեդերացիայի պատվիրակության անդամները, ի դեմս Ֆրանսիայի Աշխատանքի ընդհանուր կոնֆեդերացիայի արտաքին կապերի ղեկավար Բորիս Պլացցիի, Ֆրանսիայի Աշխատանքի ընդհանուր կոնֆեդերացիայի բյուրոյի անդամ Ֆաբիեն Ռուշիի և Ֆրանսիայի Աշխատանքի ընդհանուր կոնֆեդերացիայի խորհրդական Ռենատա Կուտասի, այցելեցին Սյունիքի մարզ և հանդիպեցին Լեռնագործների, մետալուրգների և ոսկերիչների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության անդամ արհմիության ներկայացուցիչներին և ոլորտի աշխատողներին: Տեղի ունեցավ ակտիվ քննարկում կլիմայական փոփոխությունների արդյունքում աշխատողների աշխատանքային պայմանների փոփոխության, առաջացած խնդիրների և դրանց հնարավոր լուծումների վերաբերյալ:
Ապրիլի 4-ին պատվիրակության անդամներն այցելեցին «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի համայնքի բարեկարգում» տնօրինության հիմնարկ և Արտամետ համայնքի ինտեսիվ այգիներ: «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի համայնքի Բարեկարգում» տնօրինության հիմնարկում տեղի ունեցավ հանդիպում տնօրենի և արհմիութենական ակտիվի հետ, քննարկվեցին աշխատողների աշխատանքային գործունեության ընթացքում առաջացած մի շարք հարցեր:
Արտամետ համայնքում ինտենսիվ այգիների սեփականատերը հատկապես մատնանշեց համայքնում առկա ոռոգման ջրի խնդիրը, որը ողջ մարզի համար կարևորագույնն է:

«Փոփոխվող կլիմայի պայմաններում աշխատողների իրավունքների առաջխաղացում» թեմայով կլոր-սեղան քննարկում

Ապրիլի 4-ին Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան Ֆրանսիայի Աշխատանքի ընդհանուր կոնֆեդերացիայի հետ համագործակցության շրջանակներում իրականացրեց «Փոփոխվող կլիմայի պայմաններում աշխատողների իրավունքների առաջխաղացում» թեմայով կլոր-սեղան քննարկում: Կլոր-սեղան քննարկմանը ներկա էին Ֆրանսիայի Աշխատանքի ընդհանուր կոնֆեդերացիայի արտաքին կապերի ղեկավար Բորիս Պլացցին, Ֆրանսիայի Աշխատանքի ընդհանուր կոնֆեդերացիայի բյուրոյի անդամ Ֆաբիեն Ռուշին, Ֆրանսիայի Աշխատանքի ընդհանուր կոնֆեդերացիայի խորհրդական Ռենատա Կուտասը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ռուբեն Սարգսյանը, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության ներկայացուցիչներ և ՀԱՄԿ-ի անդամ ՃՀՄ նախագահներ:

Կլոր-սեղան քննարկման ընթացքում քննարկվեցին այնպիսի թեմաներ, ինչպիսիքն են կլիմայի փոփոխությունները և արհմությունների ռազմավարությունը, շրջակա միջավայրի պաշտպանության և արդյունաբերության զարգացման ոլորտում Եվրամիության քաղաքականությունն արհմիության տեսանկյունից, արդար անցումը ՀՀ-ում, իրավիճակը և խնդիրները: Ներկաները հետաքրքրվեցին Ֆրանսիայում քննարկվող խնդիրների համատեքստում իրականացվող աշխատանքների, առանձին աշխատողների աշխատանքային պայմանների բարելավման համար տարվող աշխատանքների մասին: Քննարկումը հատկապես հատկանշական էր մերօրյա կլիմայական փոփոխությունների համատեքստում:

Միջոցառման ավարտին Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը շնորհակալություն հայտնեց հյուրերին Հայաստան այցի, քննարկման ընթացքում ներկաների հետ հաջողված փորձը կիսելու և հետագա շարունակվելիք աշխատանքների համար:

Առողջության համապարփակ ապահովագրության համակարգի ներդրման բացերի և խնդիրների մասին հարցազրույց **Sputnik** Արմենիայի եթերում

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան մանրակրկիտ ուսումնասիրել է «Առողջության համապարփակ ապահովագրության մասին» ՀՀ օրենքի նախագիծը և ներկայացրել է իր առաջարկությունները: Սակայն, ինչպես նշել է Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահի տեղակալ Տիրուհի Նազարեթյանը **Sputnik** Արմենիայի եթերում, մի շարք մտահոգություններ դեռ մնում են:

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան կարևորում է, որ նման ծավալուն բարեփոխումները պետք է իրականացվեն սոցիալական երկխոսության շրջանակներում՝ կառավարության, աշխատողների և գործատուների մասնակցությամբ:

Մասնավորապես, Կոնֆեդերացիան բարձրացնում է հարցեր՝ կապված ֆինանսական բեռի արդար բաշխման, գործատուների պատասխանատվության և աշխատողների վրա լրացուցիչ ֆինանսական բեռ սահմանելու հետ:

Ամբողջական նյութին ծանոթանալու համար այցելեք հետևյալ կայքը՝ ***https://rb.gy/lsywsr***

Ապրիլի 28-ը՝ Աշխատանքի անվտանգության և առողջության համաշխարհային օր

Աշխատանքի միջազգային կազմակերպության նախաձեռնությամբ յուրաքանչյուր տարի ապրիլի 28-ը նշվում է որպես աշխատանքի անվտանգության և առողջության համաշխարհային օր, որի նպատակն է նպաստել աշխատավայրում դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների կանխարգելմանը:
Աշխատանքի անվտանգության և առողջության 2025թ. համաշխարհային օրվա թեման է՝ «Առողջության և անվտանգության հեղափոխում. արհեստական բանականության և թվայնացման դերը աշխատավայրում»:
Արհեստական բանականությունը և թվայնացումը դարձել են աշխատատեղերի մաս՝ արագորեն փոխելով աշխատանքային միջավայրը, գործընթացները և աշխատաշուկայի պահանջները: Այս տեխնոլոգիաները ստեղծում են այնպիսի նոր հնարավորություններ, որոնք կարող են բարելավել աշխատանքային պայմանները և նվազեցնել ռիսկերը:
Սակայն, մենք միաժամանակ պետք է գիտակցենք, որ այս տեխնոլոգիաները իրենց մեջ պարունակում են նաև որոշակի մարտահրավերներ և ռիսկեր, որոնք կարող են վտանգի տակ դնել աշխատողների իրավունքները, առողջությունը և անվտանգությունը: Մինչդեռ, առողջ և անվտանգ աշխատանքային պայմանները յուրաքանչյուր աշխատողի սահմանադրական իրավունքներից է:
Հետևաբար, անկախ աշխատանքի տեսակից՝ աշխատանքային պայմանները պետք է լինեն հնարավորինս անվտանգ և ռիսկերից զերծ:
Հայաստանի Հանրապետությունում առողջ և անվտանգ աշխատանքային պայմանների ապահովման համար անհրաժեշտ է ձևավորել լիարժեք նորմատիվ-իրավական դաշտ, զարգացնել հսկողական մեխանիզմները՝ ուղղված խախտումների կանխարգելմանը նախքան աշխատանքի վայրում դժբախտ պատահարների կամ վնասների առաջացումը:
Միայն համապարփակ, համակարգված և գործնական մոտեցմամբ հնարավոր կլինի ստեղծել առողջ և անվտանգ աշխատանքային միջավայր:
Այսօր մեր նպատակն է ընդգծել առողջ և անվտանգ աշխատանքի կարևորությունը և հիշեցնել, որ յուրաքանչյուր աշխատող արժանի է արժանապատիվ և անվտանգ աշխատանքային պայմանների:

Հայաստանի արհմիությունների
կոնֆեդերացիայի նախագահ ԷԼԵՆ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ

ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁ

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի հայտարարությունը մայիսի 1-ի՝ աշխատավորների միջազգային օրվա առթիվ

Մայիսի 1-ը՝ Աշխատանքի միջազգային օրը, օրացույցում կարևոր օր է, երբ աշխարհը բարձրաձայնում է աշխատողի արդար վարձատրության, ապահով և արժանապատիվ աշխատանքային իրավունքի, սոցիալական արդարության մասին: Այսօր Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան, որպես աշխատողների շահերը պաշտպանող կազմակերպություն, և.ս մեկ անգամ շեշտում է աշխատավորի դերի կարևորությունը պետության սոցիալ-տնտեսական զարգացման գործում:

Աշխատող մարդն է հասարակության իրական հենարանը, ով կառուցում է տնտեսությունը, պահում է պետական համակարգերը, ապահովում երկրի գոյության բոլոր օղակները:

Մինչդեռ, Հայաստանի Հանրապետությունում աշխատող մարդը շարունակում է մնալ խոցելի խմբերից մեկը:

Աշխատողը մեծամասամբ հայտնվում է՝

- անհավասար պայմաններում,
- խախտված իրավունքներով,
- վտանգավոր աշխատանքային միջավայրում,
- անվստահ ապագայի հեռանկարով:

Հայաստանի արհմիութունների կոնֆեդերացիան, լինելով Հայաստանի աշխատավորության շահերը պաշտպանող ամենամեծ ու ներկայացուցչական մարմինը, բարձրաձայնում է, որ այսօր աշխատանքային իրավահարաբերություններում տեղի ունեցող խախտումներն անընդունելի են:

Մենք չենք խոսում բարելավման անհրաժեշտության մասին. մենք պահանջում ենք իրական վերափոխում:

ՀԱՄԿ–ը կոչ է անում ՀՀ կառավարությանը և պահանջում՝

- կիրառել արժանապատիվ աշխատանքի սկզբունքները տնտեսության բոլոր ոլորտներում,
- ապահովել աշխատողների սոցիալական պաշտպանությունը՝ հատկապես նվազագույն աշխատավարձի, աշխատավարձի ինդեքսավորման, աշխատանքային անվտանգության և առողջության պահպանման ոլորտներում: Աշխատողը չպետք է լինի աղքատ, նրա աշխատանքը պետք է լինի բարեկեցիկ կյանքի աղբյուր,
- զարգացնել սոցիալական գործընկերությունն աշխատանքի ոլորտում արհմիությունների, գործատուների և կառավարության միջև հավասարակշռված ու արդար սոցիալ-տնտեսական քաղաքականության իրականացման համար՝ խթանելով կոլեկտիվ պայմանագրերի համակարգի զարգացումը և ընդլայնելով արհմիությունների գործառույթները,
- ձեռնարկել վճռական քայլեր աշխատաշուկայում առկա ստվերի, շահագործման և խտրական դրսևորումների վերացման ուղղությամբ,
- սոցիալական գործընկերության շրջանակներում մշակել և իրականացնել «Արժանապատիվ աշխատանք» ազգային ռազմավարություն, որի նպատակն է ստեղծել արդար, անվտանգ և մարդակեն տրոն աշխատաշուկա,
- ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել աշխատավարձերի ինդեքսավորում, նվազագույն աշխատավարձը սահմանելով ոչ պակաս, քան 100.000 ՀՀ դրամ՝ հիմնված առկա գնաճի վրա,
- ճանաչել և հարգել աշխատողների՝ արհմիությանը անդամակցելու իրավունքը՝ առանց ճնշումների, խոչընդոտելու, միջամտելու կամ խտրականության,
- օրենսդրությամբ սահմանել կոլեկտիվ բանակցությունների պարտադիր կիրառումը,
- օրենսդրությամբ ներդնել առողջ և անվտանգ աշխատանքային միջավայրի ապահովման ժամանակակից նորմեր և կանոններ:

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան պահանջում է՝
Արժանապատիվ աշխատանք,
Արդար վարձատրություն,
Սոցիալական պաշտպանվածություն
առանց պաշտպանված աշխատողի չկա զարգացող տնտեսություն
առանց արդար վարձատրության չկա սոցիալական կայունություն

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի
Գործադիր կոմիտե
30 ապրիլի 2025թ.

Նվազագույն աշխատավարձը սահմանել ոչ պակաս, քան 100 հզր դրամ. Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ
(տեսանյութ, Ֆակտոր տեղեկատվական կենտրոն)

Տեսնյութը կարող եք դիտել՝ հետևելով այս հղմանը.
https://www.youtube.com/watch?v=J--pcbJ9ZEw

Պահանջե՞ք կնքել աշխատանքային պայմանագրեր.
կոչ՝ մայիսմեկյան շքերթում
(Տեսանյութ, Ֆակտոր տեղեկատվական կենտրոն)

Տեսնյութը կարող եք դիտել՝ հետևելով այս հղմանը.
https://www.youtube.com/watch?v=168bxnbcGfE

Հանրային հեռուստատեսության «Առավոտ Լուսո» ծրագրի հյուրն էր Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը

Տեսանյութը դիտելու համար այցելեք հետևյալ կայքը՝
https://www.youtube.com/watch?v=Qa2nU2A4cBA

«Կենտրոն» հեռուստաընկերության «Կենտրոնի առավոտը» հաղորդաշարի հյուրն էր Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահի տեղակալ Տիրուհի Նազարեթյանը

Տեսանյութը դիտելու համար այցելեք հետևյալ կայքը՝
https://www.youtube.com/watch?v=HGc75yFzRx8

Մայիսմեկյան երթը զանգվածային լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում

«Ամեն օր գրանցվող գնաճի պայմաններում ունենում ենք աշխատող աղքատներ». Էլե...

«ՀՀ-ում ամեն օր գրանցվող գնաճը, սպառողական զամբյուղի ոչ բավարար լինելը բերում են այնպիսի սոցիալ-տնտեսական...

ՄԱՄՈՒԼ.am / May 1, 2025

2024թ. աշխատանքային իրավունքի խախտման 650 դիմում ենք ստացել....

Նազարեթյանը նշեց, որ աշխատանքից ազատումը պետք է հիմնավորված լինի, օրինակ, եթե կառուցվածքային...

168.am / May 1, 2025

«Արհմիությունները թաղման պսակ առնող եւ օգնություն բաժանող կառույցներ չեն»....

«Պատերազմ» հայտարարվեց զարգացող տեխնոլոգիաներին, արհեստական բանականությանը եւ որպեսզի «ռոբոտները մե...

aravot.am / May 1, 2025

ՀՀ-ում խախտվում են աշխատանքային օրենսդրությամբ սահմանված բոլոր...

Հայաստանում աշխատողների իրավունքները ոչ միշտ են պաշտպանվում: Այդ մասին են վկայում թե՛ աշխատողները, թե՛...

Sputnik Արմենիա

Երեւանում մայիսմեկյան երթ է կայացել՝ «Արժանապատիվ աշխատանք» կոչով

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն...

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան մայիսմեկյան երթ է...

Էլեն Մանասերյանի խոսքով՝ աշխատանքային խնդիրները երկուստեք են ծագում՝ և՛ աշխատողների...

Sputnik Արմենիա

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան նախորդ տարի...

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան Աշխատանքի և աշխատավորների համերաշխության...

Armenpress / May 1, 2025

https://www.youtube.com/watch?v=RXBj5BR4lAc

«Արժանապատիվ աշխատանք» խորագրով երթ՝ աշխատավորներ...

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան մայիսի 1-ի՝ Աշխատանքի և աշխատավորների...

factor.am /

«Արժանապատիվ աշխատանք» խորագրով երթ՝ Երեւանում

Մայիսի 1-ին՝ Աշխատավորների միջազգային օրվա կապակցությամբ, Երևանի Աբովյան պուրակից մեկնարկել է...

ՓԱՍՏԻՆՖՈ / May 1, 2025

Երևանում մայիսմեկյան երթ է անցկացվել

Երևանում մայիսմեկյան երթ է անցկացվել - 1 Մայիսի, 2025

Alphanews / May 1, 2025

https://www.youtube.com/watch?v=Qu5hED3DPOk

«Հեռանկարի» հյուրն էր ՀԱՄԿ-ի նախագահ Էլեն Մանասերյանը

Աշխատանքի և աշխատավորների միջազգային օրվա առիթով «Հեռանկարը» հյուրընկալել էր Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանին: Անդրադարձ է եղել Հայաստանում գրանցված աշխատատեղերի և գործազրկության վերաբերյալ վիճակագրական տվյալներին, աշխատողների իրավունքների պաշտպանությանը, «Նվազագույն աշխատավարձը և սոցիալ-տնտեսական իրողությունները Հայաստանի Հանրապետությունում» հետազոտության արդյունքներին, աշխատաշուկայի անհավասար բաշխվածությանը, մասնավորապես այն փաստին, որ գրեթե ամբողջ տնտեսությունը, հիմնարկ-ձեռնարկությունները կենտրոնացած են Երևանում:

«Սա խնդիր է Հայաստանի Հանրապետության համար, սա ռազմավարական, անվտանգության խնդիր է, որովհետև, եթե ամեն ինչ կենտրոնացնում ենք Երևանում, մենք դատարկում ենք մեր գյուղերը, հատկապես այն գյուղերը, որոնք մեզ համար կենսական նշանակություն ունեն»,-ասել է Էլեն Մանասերյանը:

*Սկզբանղբյուր՝ **https://www.youtube.com/watch?v=OMCtlQCyRDA***

ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁ

Եզակի հաղթանակ նաև վերաքննիչ դատարանում

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի աջակցությամբ «Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ-ի արհեստակցական կազմակերպությունը Երևան քաղաքի առաջին ատյանի դատարանում հաղթել էր «Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ-ի արհեստակցական կազմակերպության նախագահի իրավունքները սահմանափակող գործողության նկատմամբ դատական գործը: 2023 թվականից ընկերության ղեկավարությունն արգելում էր արհեստակցական կազմակերպության նախագահին մուտք գործել ընկերության տարածք արհեստակցական կազմակերպության նախագահի իրավունքների և պարտականությունների իրականացման համար: Երևանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը բավարարել էր հայցը հօգուտ արհեստակցական կազմակերպության՝ պարտավորեցնելով «Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ-ին երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը 09:00-ից 18:00-ն, արհեստակցական կազմակերպության նախագահին թույլատրել անարգել մուտք գործել ընկերության տարածք:

Վերոնշյալ վճիռը «Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ-ի կողմից բողոքարկվել էր վերաքննիչ դատարան, և 2025 թվականի մայիսի 6-ին դատարանը մերժել է բողոքը՝ դատական վճիռը թողնելով ուժի մեջ:

Այս հաղթանակը առաջինն է, որը վերաբերում է արհեստակցական կազմակերպության նախագահի իրավունքների և լիազորությունների իրացմանը:

Oragir.News-ի «Ըստ էության» հաղորդաշարի տաղավարում հյուրընկալվել է Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը

Oragir.News-ի «Ըստ էության» հաղորդաշարի ընթացքում Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը խոսել է սոցիալական արդարության, Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի աշխատողների գործադուլի, դրա օրինական իրավունքի, ազատված աշխատողների աշխատանքային իրավունքների վերականգնման, կոմբինատի կողմից ազատված աշխատողներից պահանջվող խոշոր գումարի և մի շարք այլ հարցերի շուրջ։

*Սկզբնաղբյուր՝ **Oragir.News***

Տեսանյութը կարող եք դիտել՝ հետևելով այս հղմանը.
https://www.youtube.com/watch?v=TXEGDdvrReM

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանի մասնակցությունն ԱՄԿ 113-րդ համաժողովին

2025 թվականի հունիսի **10-12**-ը Ժնևում կայացած Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) **113**-րդ համաժողովին մասնակցեց Հայաստանի պատվիրակությունը՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանի գլխավորությամբ։ Պատվիրակության կազմում էին նախարարի տեղակալ Ռուբեն Սարգսյանը, Գործատուների Հանրապետական միության նախագահ Վահագն Համբարձումյանը և Հայաստանի Արհմիությունների կոնֆեդերացիայի (ՀԱՄԿ) նախագահ Էլեն Մանասերյանը։

Այս տարվա համաժողովի օրակարգում կարևոր տեղ էր զբաղեցնում աշխատանքի վայրում կենսաբանական վտանգների վերաբերյալ նոր կոնվենցիայի քննարկումը։ Սոցիալական գործընկերների ակտիվ ներգրավվածությունն ու մասնագիտական քննարկումները համաժողովի ընթացքում նպաստեցին այդ կարևոր փաստաթղթի մշակման և առաջխաղացման գործընթացին։

Հունիսի 12-ին կայացավ Սոցիալական արդարության գլոբալ կոալիցիայի ֆորումը, որը վեր հանեց արդի միտումները և մարտահրավերները։ Ֆորումի շրջանակում վերահաստատվեց, որ սոցիալական արդարության ապահովումն այսօր առավել քան երբևէ կարևոր է բոլոր աշխատողների համար՝ անկախ ոլորտից կամ զբաղվածության կարգավիճակից։

ՀԱՄԿ-ի նախագահ Էլեն Մանասերյանը հանդիպեց ԱՄԿ գլխավոր տնօրեն Ժիլբեր Հունգբոյի, Աշխատողների բյուրոյի տնօրեն Մարիա Հելենա Անդրեյի, ինչպես նաև Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների աշխատողների հարցերով համակարգող Սերգեյուս Գլովացկասի հետ։

Բոլոր հանդիպումների ընթացքում մանրամասն ներկայացվեցին Հայաստանի աշխատանքային և սոցիալ-տնտեսական ոլորտի իրավիճակը, աշխատողների իրավունքների պաշտպանությանը վերաբերող օրենսդրական բարեփոխումները և առկա խնդիրները։ Հատուկ ուշադրություն դարձվեց առողջ և անվտանգ աշխատանքային պայմանների ապահովման, գործադուլի իրավունքի իրացման, ինչպես նաև ՃՊՄԿ-ում տեղի ունեցած գործադուլի հանգամանքներին։ Քննարկվեցին նաև ԱՄԿ-ի կողմից Հայաստանում իրականացված ծրագրերի արդյունքները և դրանց շարունակականության անհրաժեշտությունը։

Այս այցելությունն ընդգծեց ՀԱՄԿ-ի կարևոր դերը ինչպես ազգային, այնպես էլ միջազգային հարթակներում՝ աշխատողների իրավունքների պաշտպանության և սոցիալական երկխոսության զարգացումն ապահովելու գործում։

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահի տեղակալ Տիրուհի Նազարեթյանն խոսել է աշխատանքային իրավունքի խախտումների և խոցելի ոլորտների մասին



Տեսանյութը դիտելու համար այցելեք հետևյալ հղումով՝
https://www.youtube.com/watch?v=VX0JM8Jv7zQ

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը հյուրընկալեց ԱՄԿ գլխավոր տնօրենի օգնական, Եվրոպայի և կենտրոնական Ասիայի տարածաշրջանային տնօրեն Բեատե Անդրեեսին

Հանդիպման ընթացքում քննարկվեցին գործադուլի իրավունքի իրացման, առողջ և անվտանգ աշխատանքային պայմաններին վերաբերող օրենսդրության բացերը, ԱՄԿ թիվ 81, 122 և 135 Կոնվենցիաները, ինչպես նաև Հանրապետական մակարդակում սոցիալական գործընկերության կոլեկտիվ պայմանագրի կնքման և եռակողմ հանձնաժողովի բնականոն աշխատանքի հետ կապված հարցերը:
Տիկին Անդրեեսը դրական գնահատեց ՀԱՄԿ-ի և ԱՄԿ գրասենյակի համագործակցությունը և նշեց, որ Հայաստանի արհմիությունների ակտիվ աշխատանքը տեսանելի է նաև միջազգային հարթակներում:

Սոցիալական արդարության միջազգային 3-րդ համաժողով

2025 թվականի հունիսի **20**-ին Երևանում անցկացվել է «Միավորվելով հանուն սոցիալական արդարության» թեմայով սոցիալական արդարության միջազգային ամենամյա երրորդ համաժողովը: Միջոցառումը միավորել էր պետական կառույցների, միջազգային կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության և սոցիալական գործընկերների ներկայացուցիչների՝ նպատակ ունենալով քննարկել սոցիալական արդարության հիմնախնդիրներն ու արժանապատիվ աշխատանքի ապահովման ուղիները:

Համաժողովին ներկա են գտնվել Չեխիայի Հանրապետության փոխվարչապետ, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Մարիան Յուրեչկան, Վրաստանի Հանրապետության օկուպացված տարածքներից ներքին տեղահանված անձանց, աշխատանքի, առողջապահության և սոցիալական հարցերի նախարար Միխեիլ Սարջվելաձեն, Իտալիայի Հանրապետության հաշմանդամություն ունեցող անձանց հարցերի նախարար Ալեսանդրա Լոկատելլին, Արաբական Միացյալ Էմիրությունների Մարդկային եղբայրության բարձրագույն կոմիտեի գլխավոր քարտուղար Խալիդ Ղանիմ Ալ-Ղայթը, ԱՄԿ գլխավոր տնօրենի օգնական և Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային տնօրեն Բեատե Անդրեեսը և մի շարք այլ բարձրաստիճան պաշտոնյաներ, քաղաքականություն մշակողներ, փորձագետներ, սոցիալական գործընկերներ:

Համաժողովի շրջանակում տեղի է ունեցել Դավոսի ձևաչափով պանելային քննարկում «Գլոբալ գործընկերություններ՝ արդար և ներառական աշխատաշուկայի համար» խորագրով, որը վարել է Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը: Քննարկմանը մասնակցել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանը, ՀՀ Ազգային ժողովի աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հերիքնազ Տիգրանյանը, Չեխիայի Հանրապետության փոխվարչապետ Մարիան Յուրեչկան, ինչպես նաև ԱՄԿ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային տնօրեն Բեատե Անդրեեսը:

Բանախոսները կարևորել են գլոբալ գործընկերությունների դերը ներառական աշխատաշուկայի ձևավորման գործընթացում՝ ներկայացնելով իրենց երկրների փորձը, մատնանշելով արդի մարտահրավերներն ու հնարավորությունները: Քննարկվել են նաև աշխատանքի իրավունքների պաշտպանության արդյունավետ գործիքակազմերը, ինչպես նաև արժանապատիվ աշխատանքի ապահովմանն ուղղված քաղաքականությունները:

Սկզբնաղբյուր՝ ***https://www.mlsa.am/news/954***

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահի տեղակալ Տիրուհի Նազարեթյանը՝ աշխատանքային իրավունքների մասին (ռեպորտաժ)



Տեսանյութը դիտելու համար այցելեք հետևյալ հղումով՝
https://www.youtube.com/watch?v=HyxoMXeRXao

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը հանդիպել է SEIU 721 տարածքային կազմակերպության հայկական ժողովի նախագահ Սիլվա Քեշիշյանին

Հայաստանի արհմիությունների նախագահ Էլեն Մանասերյանն հյուրընկալեց Ծառայությունների աշխատողների միջազգային արհմիության **(SEIU)** հարավային Կալիֆորնիայի ծառայողներին միավորող **SEIU 721** տարածքային կազմակերպության հայկական ժողովի նախագահ Սիլվա Քեշիշյանին։

Հանդիպման ընթացքում քննարկվեցին Հայաստանում արհմիությունների գործունեության, Հայաստանում և ԱՄՆ-ում սոցիալական երկխոսության, արհմիությունների միջև համագործակցության վերաբերյալ թեմաներ։

ՀԱՄԿ-ի նախագահ Էլեն Մանասերյանը, ողջունելով հյուրին, հույս հայտնեց, որ հետագայում կունենանք շարունակական և համագործակցային հարաբերություններ։

ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁ

Ագրոարդյունաբերական համակարգի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը հանդիպում է ունեցել անտառային և գյուղատնտեսության ոլորտների աշխատողների հետ

2025 թվականի հուլիսի **5-6**-ն Ագրոարդյունաբերական համակարգի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը Աղվերանում հանդիպում է ունեցել անտառային և գյուղատնտեսության ոլորտների աշխատողների հետ։

Արհմիությունների արդի մարտահրավերներն ու զարգացման ուղիները

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի և Աշխատանքի միջազգային կազմակերպության համագործակցության շրջանակում 2025 թվականի հուլիսի 12-13-ին և 19-20-ին կազմակերպվել են «Արհմիության ներկա մարտահրավերները» թեմայով սեմինարներ:

Սեմինարների ընթացքում մասնակիցները քննարկել են ժամանակակից արհմիությունների առջև կանգնած հիմնական խնդիրներն ու մարտահրավերները, ինչպես նաև դրանց հնարավոր լուծումները:

Քննարկումները ընդգրկել են հարցեր աշխատողների իրավունքների պաշտպանության, սոցիալական երկխոսության արդյունավետ մեխանիզմների, նոր տնտեսական ու տեխնոլոգիական փոփոխությունների ազդեցության, ինչպես նաև արհմիությունների գործունեության մեջ երիտասարդների և կանանց ներգրավվածության կարևորության վերաբերյալ:

Industriall Global Union-ի միջազգային արհմիության գլխավոր քարտուղարի ասիստենտ Քեմալ Օզկանի այցը Հայաստան

2025 թվականի հուլիսի **16-17**-ը **Industriall Global Union** միջազգային արհմիության գլխավոր քարտուղարի ասիստենտ Քեմալ Օզկանն աշխատանքային այցով գտնվում էր Հայաստանի Հանրապետությունում:

Այցի շրջանակում հուլիսի **16**-ին կազմակերպվել է սեմինար՝ նվիրված **«Industriall Global Union**-ի անդամ կազմակերպությունների կարողությունների զարգացմանը Հայաստանում» թեմային: Սեմինարը նախատեսված էր Արդյունաբերության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությանն (ՃՀՄ) անդամակցող շուրջ **16** կազմակերպության ներկայացուցիչների համար:

Միջոցառմանը մասնակցում էր Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը, ով հանդես եկավ բացման խոսքով՝ ընդգծելով նման ձևաչափով հանդիպումների կարևորությունը և խթանելով մասնակիցների ակտիվ ներգրավվածությունը քննարկումներին:

Սեմինարի ընթացքում ծավալվեցին բազմակողմանի քննարկումներ արդյունաբերության ոլորտում առկա մարտահրավերների, սոցիալական գործընկերության զարգացման, ինչպես նաև առողջ և անվտանգ աշխատանքային միջավայրի ապահովման ուղղությամբ:

Բոլոր մասնակիցները բարձր գնահատեցին **Industriall Global Union**-ի և հայկական արհմիությունների միջև մինչ այժմ ձևավորված արդյունավետ և երկարատև համագործակցությունը: Կողմերը վերահաստատեցին իրենց պատրաստակամությունը շարունակելու ու խորացնելու այդ համագործակցությունը:

Քննարկումներին մասնակցում էին նաև **Industriall Global Union**-ին անդամակցող **«Էլեկտրաարհմիություն»** արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Կարինե Ալոյանը և Լեռնագործների, մետալուրգների և ոսկերիչների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Էդուարդ Փահլևանյանը:

Միջոցառման ավարտին ամփոփիչ ելույթով հանդես եկավ Արդյունաբերության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Արիստակես Դանիելյանը՝ շնորհակալություն հայտնելով բոլոր մասնակիցներին արդյունավետ համագործակցության և ակտիվ ներգրավվածության համար:

Հանդիպում **IndustriALL Global Union**-ի գլխավոր քարտուղարի ասիստենտի հետ

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը և տեղակալ Տիրուհի Նազարեթյանը **2025** թվականի հուլիսի **17**-ին հյուրընկալել են **IndustriALL Global Union**-ի գլխավոր քարտուղարի ասիստենտ Քեմալ Օզկանին: Հանդիպման ընթացքում ՀԱՄԿ-ի նախագահը ներկայացրել է Հայաստանում արհմիութենական շարժման առաջնահերթությունները, առկա մարտահրավերները, ինչպես նաև վերջին տարիներին իրականացված աշխատանքներն ու ծրագրերը: Քեմալ Օզկանը ներկայացրել է **IndustriALL Global Union**-ի կողմից իրականացվող և հետագայում Հայաստանում իրականացվելիք ծրագրերը:

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահը կարևորել է հատկապես հուլիսի **16**-ին **IndustriALL Global Union**-ին անդամակցող ՀԱՄԿ-ի անդամ ՃՀՄ-երի արհմիութենական ակտիվի հետ հանդիպումը, ինչպես նաև բարձր է գնահատել նշված ճյուղային հանրապետական միություններին մշտական աջակցությունը:

Արհմիությունների դերը կորպորատիվ կառավարման մեջ

2025 թվականի հուլիսի **24**-ին տեղի ունեցավ Հայաստանի բանկերի և ֆինանսավարկային կազմակերպությունների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության (ՃՀՄ) կողմից կազմակերպված աշխատաժողովը «Արհմիությունների դերը կորպորատիվ կառավարման մեջ» թեմայով։

Միջոցառմանը մասնակցում էին Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահի տեղակալ Տիրուհի Նազարեթյանը, ՃՀՄ-ի գործկոմի անդամները, նորընտիր արհմիության նախագահները, Հայաստանի բանկերի միության աշխատակազմի ղեկավար Քրիստինե Բեգլարյանը, գլխավոր հաշվապահ Աննա Եգանյանը, ՀՀ վարկային կազմակերպությունների միության գործադիր տնօրեն Խորեն Քերոբյանը, ՀՀ կենտրոնական բանկի կորպորատիվ կառավարման մասնագետ Մարիամ Խաչատրյանը, իրավաբան Քաղցրիկ Ավագյանը, ՀՀ ֆինանսական հաշտարարի տեղակալ Փիրուզ Սարգսյանը, անկախ փորձագետ Լիգիա Ղազարյանը, «Հայաստան» խմբագրության ղեկավար Տիգրան Նիկողոսյանը։

ՀԱՄԿ-ի նախագահի տեղակալ Տիրուհի Նազարեթյանն իր ողջույնի խոսքում ընդգծեց օրենսդրական փոփոխությունների և աշխատանքային խնդիրների կարևորությունը՝ նշելով, որ արհմիությունը ոչ միայն իրավունքներ ներկայացնող ու պաշտպանող կառույց է, այլ նաև համերաշխության գաղափար և արժեհամակարգ։

ՃՀՄ-ի նախագահ Լաուրա Հակոբյանն իր ելույթում ներկայացրեց միջազգային փորձը՝ ընդգծելով, որ արհմիությունների ներգրավվածությունը կորպորատիվ կառավարման գործընթացում մեծ նշանակություն ունի։

Աշխատաժողովի ընթացքում տեղի ունեցավ մտքերի ազատ փոխանակում, որի շրջանակում մասնակիցները ներկայացրին իրենց խնդիրներն ու առաջարկները։

Առաջինի լրատվական ալիքն անդրադարձ է կատարել Արհմիությունների միջազգային կոնֆեդերացիայի կողմից կազմված «Իրավունքների համաշխարհային ինդեքս 2025» զեկույցին

Տեսանյութը դիտելու համար այցելեք հետևյալ հղումով՝
https://www.youtube.com/watch?v=Yv64jISzPCE

Իրավունքների համաշխարհային ինդեքսն աշխատողների իրավունքների խախտման միակ համապարփակ և տարեկան հրապարակվող գլոբալ զեկույցն է, որը կազմվում է Արհմիությունների միջազգային կոնֆեդերացիայի (ITUC) կողմից: 2025 թվականի զեկույցը վկայում է, որ աշխարհի տարբեր երկրներում աշխատողների և արհմիությունների իրավունքների խախտումները խորանում են՝ ստեղծելով գլոբալ ճգնաժամ:
Այս տարի զեկույցում ուսումնասիրվել է 151 երկիր, և դրանցից միայն 7-ն են արժանացել լավագույն՝ 1 գնահատականին: Արհմիությունների միջազգային կոնֆեդերացիայի կարծիքով այս ցուցանիշը մտահոգիչ է և կապ ունի աշխարհում ավտորիտար կառավարությունների աճի հետ: Զեկույցում առանձնացվել է նաև աշխատողների իրավունքների խախտումների առումով ամենավատ 10 երկրների ցանկը, որտեղ ներառվել են Բելառուսը և Թուրքիան:
Արհմիությունների միջազգային կոնֆեդերացիայի գլխավոր քարտուղար Լյուկ Թրայանգլն իր խոսքում ընդգծել է, որ գլոբալ մակարդակով տեսանելի է աշխատողների իրավունքների շարունակական վատթարացումը: Նա նշում է, որ սա հարձակում է ինչպես ժողովրդավարության, այնպես էլ աշխատողների իրավունքների վրա, ինչը հատկապես բնորոշ է ավտորիտար կառավարությունների աճին:
Հայաստանի Հանրապետությունն այս տարի արժանացել է 3 գնահատականի, ինչը նշանակում է, որ թե՛ օրենսդրության, և թե՛ գործնական հարթակներում առկա են թերություններ: Զեկույցում հատկապես ընդգծվել է գործադուլի իրավունքի իրացման սահմանափակումը:
Զեկույցին անդրադարձել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ռուբեն Սարգսյանը, իսկ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը ներկայացրել է իր դիրքորոշումը և անդրադարձել է Հայաստանում գործադուլի իրավունքի իրացման դժվար ընթացակարգին:

«Առաջնորդության վերելք». կանանց հզորացման նոր փուլ Հայաստանում

2025 թվականի հուլիսի **29**-ը նշանավորվեց «Առաջնորդության վերելք» նախաձեռնության երկրորդ փուլի հաջող ավարտով և նոր փուլի մեկնարկով: Այս եզակի ծրագիրը, որը իրականացվում է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից՝ Ավստրիական զարգացման գործակալության աջակցությամբ «Հարթակ **#5.** Հայաստանում կանանց տնտեսական հնարավորությունների հզորացման» ծրագրի շրջանակում, արդեն իսկ զգալի արդյունքներ է բերել: Նախաձեռնության մասնակից կանայք ամիսների ընթացքում հաջողությամբ առաջ մղեցին ընտանիքահեն քաղաքականությունները իրենց կազմակերպություններում:
Միջոցառմանը մասնակիցներին ոգեշնչող ելույթներով դիմեցին ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Տաթևիկ Ստեփանյանը, ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հերիքնազ Տիգրանյանը և Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը:
Առաջին անգամ ՄԱԶԾ-ն կանանց առաջնորդության զարգացման մոդելի հիմքում դրել է ոչ միայն կարիերայի միջին օղակում գտնվող կանանց առաջնորդական կարողությունների հզորացումը «ռադիկալ խոնարհության» մոդելի կիրառմամբ, այլև առաջնորդական հմտությունների գործնական կիրառության հնարավորությունների ստեղծումը ընտանիքահեն պրակտիկաների խթանման միջոցով: Այս ամենին միացել է նաև մասնակիցների մոտիվացիայի բարձրացումը՝ նրանց կողմից մշակված լուծումների և նախաձեռնությունների իրականացման աջակցությամբ:
Նախաձեռնության արդյունքները արդեն իսկ խոսում են ինքնին. ամրապնդվել են հանրային և մասնավոր հատվածի, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների **100** կանանց կարողությունները, իսկ ավելի քան **55** մասնակից առաջին անգամ իրենց կազմակերպություններում ներկայացրել է ընտանիքահեն քաղաքականություններ և իրազեկել գործընկերներին: Ծրագիրն ունի շարունակական բնույթ:

ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁ

Հայաստանի Հանրապետությունում գնաճի ազդեցությունը աշխատողների եկամուտների և կենսամակարդակի վրա

ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների համաձայն՝ 2025 թվականի հունիսին, 2024թ. հունիսի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 3.9% գնաճ: Սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքների գները աճել են 6.2%-ով: Մասնավորապես՝ հացը թանկացել է 3.9%-ով, կարագը՝ 14%-ով, մակարոնեղենը՝ 5.3%-ով, մսամթերքը՝ 1.6%-ով, մրգերը՝ 3.7%-ով, բանջարեղենը՝ 25%-ով, իսկ կարտոֆիլի՝ 67.3%- ով:

Միևնույն ժամանակ, որոշ ապրանքների գներ նվազել են. պանրի և կաթնաշոռի գներն՝ 1.5%-ով, իսկ ձվինը՝ 6.2%-ով:

Նման գնաճի միտումները՝ հատկապես առաջին անհրաժեշտության ապրանքների պարագայում, խորացնում են սոցիալապես խոցելի խմբերի վիճակը:

ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2024թ.» զեկույցի համաձայն՝ 2023թ. տնային տնտեսությունների մեկ շնչի հաշվով միջին ամսական ծախսերի 42.9%-ը ուղղվում է սննդին, իսկ 32.8%-ը՝ ծառայություններին: Ոչ պարենային ապրանքների բաժինը կազմում է 19.4%, ծխախոտի գնումը՝ 4.5%, իսկ ալկոհոլային խմիչքները՝ 0.4%: Այս թվերը վկայում են այն մասին, որ բնակչության եկամուտների մեծ մասը ծախսվում է կենսական անհրաժեշտության ապրանքների վրա, մինչդեռ կրթությանը, ժամանցին կամ խնայողություններին ուղղվող գումարները մնում են սահմանափակ:

Երբ բնակչության եկամտի գրեթե կեսը ծախսվում է սննդի վրա, նույնիսկ փոքր գնաճն անմիջական ազդեցություն է ունենում նրանց կյանքի որակի վրա:

2025 թվականի հունվար-հունիսին Հայաստանի Հանրապետությունում միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 294621 դրամ, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 5.6 տոկոսով, իսկ 2025 թվականի հունիսին այն կազմել է 297 624 դրամ:

Որոշ ոլորտներում աշխատավարձերի մակարդակը զգալիորեն ցածր է երկրի միջին ցուցանիշից՝ մասնավորապես. Կացության և հանրային սննդի կազմակերպման ոլորտում միջին աշխատավարձը կազմել է 148 014 դրամ, Սպասարկման այլ ծառայությունների ոլորտում՝ 150 351 դրամ, Մշակույթ և արվեստի ոլորտում՝ 159520 դրամ, իսկ կրթության ոլորտում՝ 166 118 դրամ:

Ամենացածր միջին ամսական անվանական աշխատավարձը գրանցվել է Գեղարքունիքի մարզում՝ 146 355 դրամ, իսկ ամենաբարձրը՝ Սյունիքի մարզում՝ 306 283 դրամ: Երևանում այն կազմել է՝ 298879 դրամ:

Թեպետ 2025 թվականի հունվար-հունիսին Հայաստանում արձանագրվել է միջին ամսական անվանական աշխատավարձի աճ, ապրանքների և ծառայությունների թանկացումը շարունակում է պատճառ հանդիսանալ աշխատողների իրական եկամուտների ցածր մակարդակի պահպանմանը:

Հայաստանի Հանրապետությունում 2023 թվականին աղքատության մակարդակը գնահատվել է 23.7%, ինչը 1.1 տոկոսային կետով ցածր է 2022 թվականի ցուցանիշից: Ծայրահեղ աղքատության մակարդակը կազմել է 1.1%՝ նվազելով 0.1 տոկոսային կետով: Վարձու աշխատողների շրջանում աղքատության մակարդակը կազմել է 19.4%:

Աղքատության տարածվածությունը տարբերվում է ըստ բնակավայրերի: Քաղաքային բնակավայրերում այն կազմել է 21.5%, իսկ գյուղական բնակավայրերում 27.0%: Երևանում այն կազմել է 17.9%:

Աղքատության ամենաբարձր մակարդակը գրանցվել է Շիրակի մարզում՝ 43.1%, իսկ ամենացածրը՝ Սյունիքի մարզում՝ 7.0%:

2025թ. երկրորդ եռամսյակում ՀՀ առողջապահության նախարարության մեթոդաբանությամբ հաշվարկված նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը կազմել է 81680.9 դրամ, ինչը բարձր է նվազագույն աշխատավարձի չափից: Համաշխարհային բանկի մեթոդաբանությամբ հաշվարկված նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը կազմել է 64 713.9 դրամ:

Նվազագույն սպառողական զամբյուղների արժեքները Հայաստանի Հանրապետությունում որևէ օրենքով կամ այլ իրավական ակտով ընդունված չեն (պաշտոնապես սահմանված չեն) :

Աղքատության մակարդակի կրճատման, աշխատողների և նրանց ընտանիքների կենսամակարդակի բարձրացման, ինչպես նաև երկրում արժանապատիվ աշխատանքի ապահովման համար անհրաժեշտ է պաշտոնապես սահմանել նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը, ինչպես նաև ընդունել աշխատավարձի ինդեքսավորման կարգ, ինչը, սահմանված է դեռևս 2004 թվականին ընդունված ՀՀ աշխատանքային օրենսգրքի 182-րդ հոդվածով:

Տարածաշրջանային աշխատաժողով Երևանում

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան Աշխատանքի միջազգային կազմակերպության ֆինանսական աջակցությամբ **2025** թվականի օգոստոսի **5-6**-ը Երևանում կազմակերպեց երկօրյա տարածաշրջանային աշխատաժողով:

Տարածաշրջանային աշխատաժողովին մասնակցում էին արհմիությունների առաջնորդներ և ակտիվիստներ Հայաստանից, Վրաստանից, Մոլդովայից, Ուկրաինայից, Ղազախստանից, Ղրղզստանից, Տաջիկստանից, Ուզբեկստանից:

Աշխատաժողովը կրում էր «Արհմիություններ և անցում. աշխատողների ապագայի ձևավորումը» խորագիրը:

Բացման խոսքով հանդես եկան Աշխատանքի միջազգային կազմակերպության աշխատողների գործունեության բյուրոյի Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի գրասենյակի պատասխանատու Սերգեյուս Գլովացկասը, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի փոխնախարար Ռուբեն Սարգսյանը, Համաեվրոպական տարածաշրջանային խորհրդի նախագահ Իգոր Զուբկունը, Աշխատանքի միջազգային կազմակերպության աշխատողների հարցերով գլխավոր մասնագետ Գոչա Ալեքսանդրիան:

Բացման խոսքում ելույթ ունեցողները շեշտեցին, որ թվայնացումը, պլատֆորմային աշխատանքը և արհեստական բանականությունը դարձել են առօրյա կյանքի մաս, և ոչ ոք չի կարող խուսափել դրանից, քանի որ աշխատողները չեն կարող ապրել այլ իրականության մեջ, քան հիմա է: Հետևաբար, արհմիությունները պետք է արդիականացվեն և օգտագործեն արհեստական բանականության և թվայնացման հնարավորությունները:

Փոխնախարարը ներկայացրեց ՀՀ օրենսդրության մեջ թվայնացմանը վերաբերող բարեփոխումները, մասնավորապես՝ էլեկտրոնային աշխատանքային պայմանագրերի վերաբերյալ, որոնք ուժի մեջ կմտնեն **2026** թվականին:

Բոլոր երկրների մասնակիցները ներկայացրին արհմիությունների փորձը և իրենց երկրներում ստեղծված իրավիճակը:

Ի տարբերություն այլ երկրների, որտեղ արհմիությունները փորձում են աշխատել թվայնացված աշխատանքում, Ուկրաինայի արհմիությունները նաև ստիպված են գոյատևել պատերազմի և առօրյա մարտերի պայմաններում:

Աշխատանքի միջազգային կազմակերպության աշխատողների գործունեության բյուրոյի տնտեսագետ և աշխատողների մասնագետ Մայքլ Վաթը ներկայացրեց նոր տեխնոլոգիաներ և բիզնես մոդելներ։
Մասնակիցները նաև ներկայացրեցին հարթակային աշխատողների հետ աշխատանքի իրենց փորձը։
Նիստի ընթացքում մասնակիցներին ներկայացվեց նաև Աշխատանքի միջազգային կազմակերպության տեսակետը հարթակային աշխատողների վերաբերյալ։
Համաեվրոպական տարածաշրջանային խորհրդի նախագահ Իգոր Զուբկուն և Արհմիությունների միջազգային կոնֆեդերացիայի ներկայացուցիչ Աննա Սալնիկովան ներկայացրին Միջազգային արհմիությունների կոնֆեդերացիայի մոտեցումը և առաջիկա քայլերը։
Երկրորդ օրը մասնակիցներին ներկայացվեց արհեստական բանականության ազդեցությունն աշխատաշուկայի վրա։ Նիստը վարեց Գոչա Ալեքսանդրիան, որը կիսվեց միջազգային փորձով։ Ավելի ուշ նիստը շարունակեց Մայքլ Վաթը, որը ներկայացրեց աշխատողների իրավունքները տվյալների հավաքագրման և տվյալների պաշտպանության հարցում։ Յուրաքանչյուր պատվիրակություն կիսվեց իր սեփական փորձով։
Յուրաքանչյուր նիստից հետո տեղի ունեցան ակտիվ քննարկումներ։
Վերջին նիստում մասնակիցները աշխատեցին խմբերով, մշակեցին իրենց սեփական գործունեության պլանները և ներկայացրին համապատասխան և օգտակար առաջարկներ։

Հայաստանի և Ղրղզստանի արհմիությունների նախագահները ստորագրեցին համագործակցության հուշագիր

2025 թվականի օգոստոսի **6**-ին Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան և Ղրղզստանի արհմիությունների ֆեդերացիան ստորագրեցին համագործակցության հուշագիր: Փաստաթուղթը նոր էջ է բացում երկու երկրների արհմիութենական կազմակերպությունների փոխհարաբերություններում՝ նպաստելով փորձի փոխանակմանը և համատեղ նախաձեռնությունների իրականացմանը:

Հուշագրի շրջանակում կողմերը պայմանավորվել են սերտորեն համագործակցել մի շարք ուղղություններով, մասնավորապես՝ աշխատողների սոցիալական և տնտեսական իրավունքների և շահերի պաշտպանության ոլորտում: Արհմիութենական կազմակերպությունների միջև համագործակցության հիմնական ուղղություններն են՝ սոցիալական գործընկերության ձևերի ու մեթոդների մշակումը, սոցիալական և աշխատանքային հարաբերությունների կարգավորումը կոլեկտիվ բանակցությունների միջոցով, առողջ ու անվտանգ աշխատանքի և էկոլոգիայի ոլորտներում փորձի փոխանակումը, արհմիութենական կրթության զարգացումը, համատեղ կրթական նախաձեռնությունների իրականացումը՝ ներառյալ դասընթացներ, սեմինարներ, ֆորումներ և կոնֆերանսներ:

Այս նախաձեռնությունն ընդգծում է կողմերի հանձնառությունն աշխատողների իրավունքների պաշտպանության և արհմիութենական շարժման զարգացման գործում: Հուշագիրը հիմք կդառնա երկարաժամկետ ու արդյունավետ համագործակցության համար:

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի արտագնա նիստը՝ արդի մարտահրավերների և միջազգային փորձի շուրջ

2025 թվականի օգոստոսի **7-8**-ին Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան կազմակերպեց արտագնա նիստ, որին մասնակցեցին կոնֆեդերացիային անդամակցող ճյուղային հանրապետական միությունների նախագահներն ու ներկայացուցիչները։ Նիստին մասնակցում էին նաև Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի Աշխատանքային հարաբերություններում հավասարության և երիտասարդության հարցերով հանձնաժողովների նախագահները, ինչպես նաև կոնֆեդերացիայի աշխատակազմի ներկայացուցիչները։

Արտագնա նիստի հատուկ հյուրն էր Աշխատանքի միջազգային կազմակերպության Աշխատողների գործունեության բյուրոյի Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի գրասենյակի պատասխանատու Սերգեյուս Գլովացկասը։ Նրա մասնակցությունը կարևոր հնարավորություն ընձեռեց Հայաստանի արհմիություններին անմիջականորեն ծանոթանալու միջազգային փորձին և ԱՄԿ նոր նախաձեռնություններին։

Նիստի օրակարգում ընդգրկված էին արհմիությունների առջև ծառացած արդի մարտահրավերները, ինչպես նաև միջազգային մակարդակում արձանագրվող նոր միտումները։ Ներկայացումներին հաջորդեց ակտիվ քննարկում, որի ընթացքում մասնակիցները մտքեր փոխանակեցին աշխատողների իրավունքների պաշտպանության, սոցիալական երկխոսության զարգացումների և համաշխարհային փորձի կիրառման հնարավորությունների շուրջ։

«Քաղհասարակության հարթակում երիտասարդների ներգրավվածության շարժառիթները» թեմայով սեմինար

2025 թվականի օգոստոսի **22-24**-ը Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան, համագործակցելով «Սոլիդարիթի Սենթր» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության հետ, Թուֆենկյան Ավան Ձորագետ հյուրանոցում երիտասարդ արհմիութենականների համար կազմակերպեց «Քաղհասարակության հարթակում երիտասարդների ներգրավվածության շարժառիթները» թեմայով սեմինար ։

Եռօրյա սեմինարի ընթացքում մասնակիցները քննարկեցին քաղհասարակության ոլորտում առկա խնդիրները և երիտասարդների ներգրավվածության ձևերը։ Հատուկ ուշադրություն դարձվեց արհմիությունների գործունեության արդի մարտահրավերներին։

ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁ

Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հանրային ծառայողների աշխատողների ՃՀՄ-ի Երիտասարդական խորհրդի եռօրյա հանդիպում

2025 թվականի սեպտեմբերի 5-ից 7-ը տեղի է ունեցել Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հանրային ծառայողների աշխատողների ՃՀՄ-ի Երիտասարդական խորհրդի եռօրյա հանդիպումը Ծաղկաձորի «Ռիպա» առողջարանում։

Նոր ձևավորված խորհրդի անդամները հնարավորություն են ունեցել շփվել նաև նախորդ սերնդի երիտասարդական թևի ակտիվ անդամների հետ՝ փորձի և գիտելիքի փոխանակման նպատակով։

Հանդիպման ընթացքում երիտասարդները ծանոթացել են «Արհեստակցական միությունների» ՀՀ օրենքով սահմանված իրավունքներին ու գործիքներին, արդյունավետ քննարկումների և խմբային աշխատանքների միջոցով վերլուծել են արհմիությունների խնդիրներն ու դրանց լուծումները, անդրադարձել են արհմիությունների գործունեության լավագույն և վատագույն կողմերին։

Խորհուրդը հանդիպման ընթացքում ընտրել է Ղեկավար կոմիտեի անդամներ և քննարկել առաջիկա անելիքները։

Աղբյուր՝ Հայաստանի պետհմնարկների, ՏԻՄ-երի, հասարակական սպասարկման աշխատողների ՃՀՄ-ի պաշտոնական կայք
https://arhmiutyun.org/2025/09/08/youth-board-weekend-meeting-september-20258/

«Արհմիությունների դերն Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիաների խթանման գործում» թեմայով համաժողով

Ուզբեկստանի մայրաքաղաք Տաշքենդում սեպտեմբերի 9-ից 11-ն անցկացվել է գիտագործնական միջազգային համաժողով «Արհմիությունների դերն Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիաների խթանման գործում» թեմայով: Համաժողովին մասնակցում էին 30 երկրների ներկայացուցիչներ, փորձագետներ: ՀԱՄԿ-ի նախագահ Էլեն Մանասերյանն իր ելույթում, ողջունելով Համաժողովը, ներկայացրել է ՀՀ-ում ԱՄԿ կոնվենցիաների կիրարկման գործընթացը, առկա խնդիրներն ու մարտահրավերները, ձեռքբերումները, ինչպես նաև ՀԱՄԿ-ի կողմից կատարվող աշխատանքները կոնվենցիաների կյանքի կոչման, դրանք ի շահ աշխատողների օգտագործման հարցում:

Աղբյուր՝ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի ֆեյսբուքյան էջ

«Հավասար վարձատրություն, արժանապատիվ աշխատանք» թեմայով պանելային քննարկում

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահի տեղակալ Տիրուհի Նազարեթյանը սեպտեմբերի 10-ին մասնակցել է «Հավասար վարձատրություն, արժանապատիվ աշխատանք» թեմայով պանելային քննարկմանը:
Իր խոսքում Նազարեթյանը նշել է, որ արհմիություններում այսօր դրական խտրականություն կա. կանանց ներկայացվածությունը բավական բարձր է: Սակայն ընդհանուր առմամբ կանայք աշխատաշուկայում շարունակում են իրականացնել մեծամասամբ ցածր վարձատրվող աշխատանք: Կոլեկտիվ պայմանագիրը լավագույն գործիքն է աշխատավայրում, ոլորտում և հանրապետական մակարդակում արդարացի վարձատրության չափորոշիչներ սահմանելու համար՝ չսպասելով առանձին օրենսդրական կարգավորումների:
Այն հարցին, թե ինչպե՞ս հաշվել աշխատանքի գինը և ինչ դեր ունի պետությունը, Նազարեթյանը պատասխանել է, որ նախ պետք է ճիշտ հաշվել նվազագույն զամբյուղը, ինչպես ասում են կյանքի գինը տվյալ պետությունում, դրա հիման վրա սահմանել իրական նվազագույն աշխատավարձ, հետո թողնել շուկայական հարաբերությունների կարգավորմանը: Պետությունը երկար տարիներ պատճառաբանում է, որ շուկայական հարաբերությունների դեպքում շատ միջամտելը սխալ է, սակայն կառավարումը պետք է միտված լինի առաջին հերթին այնպիսի միջավայր ստեղծելուն, որտեղ քաղաքացիները առնվազն սոցիալապես ապահով են ապրում: Դրան հասնելու համար պետք է իրական սոցիալական գործընկերություն, մինչդեռ Հանրապետական կոլեկտիվ պայմանագիրը շարունակում է մնալ չստորագրված:

Աղբյուր՝ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի պաշտոնական կայք

«Արհմիության անդամակցության և արհմիութենական աշխատանքի արդյունավետության բարձրացման ուղիները» թեմայով սեմինար

Հայաստանի առևտրի, հասարակական սննդի, սպառկոոպերացիայի և ծեռներեցության աշխաատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը սեպտեմբերի 12-ից 14-ը քաղաք Ծաղկաձորում կազմակերպեց սեմինար անդամ կազմակերպությունների համար՝ «Արհմիության անդամակցության և արհմիութենական աշխատանքի արդյունավետության բարձրացման ուղիները» թեմայով:
Մասնակիցներին ողջունեց և սեմինարի կանոնների մասին տեղեկացրեց Միության նախագան Շմավոն Մկրտչյանը: Սեմինարի թրեյներ Լիանա Ամիրաղյանը ներկայացրեց արհիմության գործառույթների, նպատակների, խնդիրների և արհիմության անդամակցության շարժառիթների մասին:
Մասնակիցները տեղեկացան նաև կոլեկտիվ պայմանագրի, կոլեկտիվ բանակցությունների, ՀՀ աշխատանքային օրենսգրքում կատարված փոփոխությունների մասին, որը հմտորեն մատուցեց ՀԱՄԿ-ի իրավաբան Աննա Բարիկյանը և պատասխանեց մասնակիցներին հետաքրքրող բոլոր հարցերին:
ՀԱՄԿ-ի կառուցվածքի և արհմիութենական շարժման առանձնահատկությունների մասին խոսեց ՀԱՄԿ-ի ուսումնահետազոտական կենտրոնի ղեկավար Վարդուհի Բրուտյանը:
Իր խոսքում Միության նախագահ Շմավոն Մկրտչյանը ընդգծեց արհմիության առաջնորդին բնորոշ հատկանիշները՝ հատկապես կոլեկտիվում հեղինակություն վայելելն ու արհեստավարժ լինելը: Նա կարևորեց արհեստակցական կազմակերպությունների տեղն ու դերը, որպես Հայաստանում արհիմութենական շարժման զարգացման սկզբնաղբյուր և առաջնային օղակ:
Սեմինարի ողջ ընթացքը հագեցած էր ինտերակտիվ խմբային քննարկումներով և դերախաղերով, որը մասնակիցներին հնարավորություն տվեց ակտիվ լինել քննարկումների և որոշումների կայացման ընթացքում:
Քննարկումների արդյունքում սեմինարի մասնակիցները եկան այն համոզման, որ արհիմության անդամակցության և արհմիութենական աշխատանքի արդյունավետության բարձրացմանն խոչընդոտ են հանդիսանում որոշ գործատուներ, ինչպես նաև ոլորտում արհմիության արհեստավարժ առաջնորդների պակասը:
Արդյունքում մասնակիցներն առաջարկեցին ակտիվացնել իրազեկման և արհիութենական կադրերի պատրաստման աշխատանքները:

Աղբյուր՝ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի պաշտոնական էջ
https://hamk.am/gortsuneutyun

«Արհմիության անդամակցության շարժառիթները» թեմայով երկօրյա սեմինար

2025 թվականի սեպտեմբերի **13**-ից **14**-ը Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան, համագործակցելով «Սոլիդարիթի Սենթր» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության հետ, կազմակերպել է «Արհմիության անդամակցության շարժառիթները» թեմայով երկօրյա սեմինար։ Սեմինարի նպատակն էր ուսումնասիրել աշխատողների անդամակցությունը խթանող և նպաստող գործոնները, բացահայտել մասնակցության մոտիվացիայի հիմնական բաղադրիչները, ինչպես նաև ընդգծել արհմիությունների դերակատարությունը աշխատողների իրավունքների պաշտպանության գործում։

Սեմինարը մասնակիցներին հնարավորություն է տվել քննարկելու միջազգային փորձը, պատկերացնելու ժամանակակից մարտահրավերները և առաջարկելու արդյունավետ մոտեցումներ՝ արհմիություններում ներգրավվածությունը բարձրացնելու ուղղությամբ։ Սեմինարն անցկացվել է ինտերակտիվ ձևաչափով, ներառելով խմբային աշխատանքներ, հարցուպատասխան և թեմատիկ քննարկումներ, ինչը նպաստել է մասնակիցների ներգրավվածության և գիտելիքների ամրապնդմանը։

«Սոցիալական գործընկերություն և բանակցություններ » թեմայով սեմինար

2025 թվականի սեպտեմբերի 18-ին և 19-ին Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի և Հայաստանում Համերաշխության կենտրոնի համագործակցությամբ տեղի է ունեցել «Սոցիալական գործընկերություն և բանակցություններ» թեմայով սեմինար, որը վարում էին Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը և իրավաբան Աննա Բարիկյանը։
Ակտիվ քննարկումներով ու հետաքրքիր դերախաղերով համեմված սեմինարն արդյունավետ գործիքներ տվեց մասնակիցներին աշխատատեղերում ճիշտ բանակցություններ վարելու և կոլեկտիվ պայմանագրեր կնքելու համար։



Աղբյուր՝ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի ֆեյսբուքյան էջ
https://www.facebook.com/reel/1590409758994020

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան առաջարկություն է ներկայացրել՝ ապահովելու, որ տոնական օրերի համընկնումը չխանգարի աշխատողների հանգստին

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովին ներկայացվել է առաջարկություն, որի համաձայն, եթե հանգստյան օրը համընկնում է ոչ աշխատանքային՝ տոնական կամ հիշատակի օրվա հետ, ապա հանգստյան օրը պետք է տեղափոխվի անմիջապես հաջորդող աշխատանքային օր:

Նախաձեռնության նպատակն է ապահովել աշխատողների հանգստի օրերի լիարժեք օգտագործումը և կանխարգելել այն իրավիճակը, երբ տոնական օրերի համընկնումը հանգեցնում է հանգստյան օրերի պակասին:

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան ընդգծում է, որ նման փոփոխությունը կնպաստի աշխատավայրերում սոցիալական արդարության ամրապնդմանը և աշխատողների իրավունքների պաշտպանության բարձրացմանը:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՆՖԵԴԵՐԱՑԻԱ

ՆԱԽԱԳԱՀ

0010, Երևան, Վ. Սարգսյան 26/3, հեռ.՝ (010) 54 52 37, էլ. հասցե՝ hamk@hamk.am

19.09.2025թ. N05-01/100

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ ՀԵՐԻՔՆԱԶ ՏԻԳՐԱՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Տիգրանյան,

Ձեզ է ներկայացվում ՀՀ աշխատանքային օրենսգրքի 156-րդ հոդվածը նոր 3-րդ մասով լրացնելու առաջարկությունը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 156-րդ հոդվածը լրացնել նոր՝ 3-րդ մասով հետևյալ բովանդակությամբ՝ «Եթե հանգստյան օրը և ոչ աշխատանքային տոնական կամ հիշատակի օրը համընկնում են, ապա հանգստյան օրը տեղափոխվում է տոնական կամ հիշատակի ոչ աշխատանքային օրվան հաջորդող աշխատանքային օր»:

Աշխատանքային օրենսգրքի 151-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի համաձայն՝ աշխատողն ունի ամենշաբաթյա անընդմեջ հանգստի և ամենամյա հանգստի իրավունք, որի մեջ մտնում են նաև ոչ աշխատանքային տոնական կամ հիշատակի օրը, սակայն աշխատանքային տարվա ընթացքում հաճախ են լինում դեպքեր, երբ ամենշաբաթյա անընդմեջ հանգստյան օրը և ոչ աշխատանքային տոնական կամ հիշատակի օրը համընկնում են. օրինակ՝ 2021 թվականին համընկել է 4 օր, 2022 թվականին՝ 6 օր, 2023 թվականին՝ 4 օր, իսկ 2024 և 2025 թվականներին համընկնումը 3 օր է:

Վերոգրյալի հետևանքով աշխատողը լիարժեք չի կարողանում իրացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված հանգստի իրավունքը, քանի որ համընկնումների դեպքում, աշխատողը զրկվում է իր հայեցողությամբ տոնական և հիշատակի օրերը, որպես ոչ աշխատանքային օր, օգտագործելու իրավունքից:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԷԼԵՆ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ

Աղբյուր՝ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի պաշտոնական կայք

Մասնակցություն Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հանրային ծառայողների աշխատողների ՃՀՄ-ի ընդլայնված նախագահության նիստին

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը մասնակցել է սեպտեմբերի 20-ին կայացած Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հանրային ծառայողների աշխատողների ՃՀՄ-ի ընդլայնված նախագահության նիստին։
Նիստի ընթացքում քննարկվել են ՃՀՄ անդամ կազմակերպությունների կողմից իրականացված աշխատանքները։
Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանն ներկայացրել է Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի կողմից կատարված աշխատանքները, խնդիրները, գործունեության ուղղությունները։

Աղբյուր՝Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հանրային ծառայողների աշխատողների ՃՀՄ-ի ֆեյսբուքյան էջ
https://www.facebook.com/arhmiut?locale=hy_AM

ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁ

Հայաստանի արդյունաբերության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության խորհրդի ընդլայնված նիստ

Հայաստանի արդյունաբերության աշխատողների արհմիութենական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը հոկտեմբերի 1-ին անցկացրեց խորհրդի ընդլայնված նիստ, որին ներկա էր Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը: Հայաստանի արդյունաբերության աշխատողների ՃՀՄ նախագահ Արիստակես Դանիելյանը ողջունեց խորհրդի անդամներին՝ մաղթելով արդյունավետ աշխատանքային քննարկում:

Նիստի ընթացքում քննարկվեցին առկա խնդիրներն ու առաջիկայում սպասվող անելիքները:

ՀԱՄԿ-ի նախագահ Էլեն Մանասերյանը ողջունեց հյուրերին, ներկայացրեց ՀԱՄԿ-ի ներկայիս ծրագրերը, Արժանապատիվ աշխատանքի օրվան ընդառաջ իրականացվող միջոցառումները: Բովանդակալից քննարկումը լի էր ներկաներին հետաքրքրող հարցերով, որոնց տրվեցին սպառիչ պատասխաններ:

Աղբյուր՝ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի կայք
https://hamk.am/khorhrdi-yndlaynvats-nist

Ուկրաինացի արհմիութենականների այցը Հայաստան՝ Ագրոարդի նախաձեռնությամբ

Հոկտեմբերի 1-ից 4-ը Ագրոարդի համակարգի աշխատողների արհմիությունը՝ նախագահ Հասմիկ Ջհանգիրյանի նախաձեռնությամբ, հյուրընկալեց Ուկրաինայի Ագրոարհմիության ներկայացուցիչներին, Ուկրաինայի Ագրարային համալսարանի արհմիության նախագահին, գյուղատնտեսական քոլեջների արհմիության նախագահներին, գյուղատնտեսական և վերամշակող խոշոր կազմակերպությունների արհմիության ներկայացուցիչներին և նախագահ Սվետլանա Սամսուդին: Այցի շրջանակներում կայացավ երկօրյա աշխատաժողով, որտեղ քննարկվեցին ոլորտի խնդիրները, պատերազմի ազդեցությունն աշխատողների պայմանների վրա և աշխատանքի անվտանգության խնդիրները: Համաժողովի բացմանը ողջույնի խոսքով հանդես եկավ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա նախագահ Էլեն Մանասերյանը: ՀԱՄԿ-ի նախագահի տեղակալ Տիրուհի Նազարեթյանը ներկայացրեց ոլորտի հիմնախնդիրները Հայաստանում: Կանանց հարցերով հանձնաժողովի նախագահ Նադիա Բուռլական և ՀԱՄԿ-ի հավասարության հանձնաժողովի նախագահ Լիանա Ամիրաղյանը ներկայացրեցին խտրականության հիմնախնդիրները և ԱՄԿ 190 կոնվենցիայի վավերացումից հետո անհրաժեշտ հետագա քայլերի առաջարկները: Աշխատաժողովը հնարավորություն ընձեռեց Հայաստանի և Ուկրաինայի ոլորտային արհմիությունների ներկայացուցիչներին իրականացնել փորձի փոխանակում, որը կկիրառվի ռազմավարությունների մշակման ընթացքում:

Աղբյուր՝ Ագրոարդյունաբերական համակարգի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության պաշտոնական կայք
https://www.profagro.am/blog.html

Արժանապատիվ աշխատանքի միջազգային օրվան՝ հոկտեմբերի 7-ին, նվիրված սեմինար

Հայաստանի թեթև արդյունաբերության աշխատողների ճյուղային հանրապետական միությունը 2025 թվականի հոկտեմբերի 4-ից 5-ը Ծաղկաձորի «Ծաղկահովիտ» հյուրանոցում կազմակերպել է սեմինար «Անհատական և կոլեկտիվ աշխատանքային հարաբերությունները թեթև արդյունաբերության ոլորտում» թեմայով, որն իրականացվել է «Արժանապատիվ աշխատանքի միջազգային օրվան» նվիրված ՀԱՄԿ-ի միջոցառումների շրջանակում։

Սեմինարում բացման խոսքով հանդես է եկել ՃՀՄ նախագահ Սրապիոն Առաքելյանը, ով ներկայացրել է մասնակիցներին սեմինարի օրակարգը և դրա հիմնական ուղղությունները, նպատակները, խնդիրները և սպասելիքները։ Սեմինարին մասնակցել են ՀԱՄԿ-ի նախագահ Էլեն Մանասերյանը և ՀԱՄԿ-ի աշխատանքային և սոցիալական իրավունքների պաշտպանության բաժնի իրավաբան Աննա Բարիկյանը, ովքեր հանդես են եկել որպես հիմնական զեկուցողներ։ Յուրաքանչյուր զեկուցումից հետո տեղի է ունեցել ակտիվ քննարկումներ, բանավեճեր, առաջարկություններ, որոնցից գործնական մի շարք առաջարկություններ ընդունվել են ՃՀՄ-ի կողմից՝ հետագա գործունեության պլանում ընդգրկելու և իրականացնելու նպատակով։

Մասնակիցներն իրենց ելույթներում ներկայացրել են թեթև արդյունաբերության ոլորտում բազմաթիվ խնդիրներ, արդի մարտահրավերներ։ Քննարկման արդյունքում տրվել են իրավական պարզաբանումներ և դրանց լուծման ուղղությունների մասին խորհրդատվություններ։

Աղբյուր՝ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի պաշտոնական կայք
https://hamk.am/tekhekatvutyun-arzhanapativ-ashkhatanqi-mijazgayin-orvan-hoktemberi-7-in-nvirvats-seminari-veraberyal

Հոկտեմբերի 7-ը արժանապատիվ աշխատանքի համաշխարհային օրն է

Արժանապատիվ աշխատանքը յուրաքանչյուր մարդու արդար վարձատրության, առողջ և անվտանգ աշխատանքային պայմանների, սոցիալական պաշտպանության և աշխատանքային իրավունքների համալիր իրականացման երաշխիքն է: Ցավոք, Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային իրավահարաբերություններն ու սոցիալական գործընկերությունը հեռու են լիարժեք լինելուց:
Աշխատողը մշտապես բախվում է հոգեբանական, երբեմն էլ նաև ֆիզիկական բռնությունների: Աշխատանքը կորցնելու մշտական վախի մթնոլորտը հեռու է առողջ և արժանապատիվ լինելուց:
Սոցիալական արդարությունը շատ դեպքերում երազանք է...
Հոկտեմբերի 7-ը օրացույցում առանձնացնելով՝ ևս մեկ անգամ (թեպետ ամեն օր էլ) բարձրաձայնում ենք աշխատանքային իրավահարաբերություններում խնդիրների մասին:
Օրենսդրությունը կարող է լավը լինել, համապատասխանել միջազգային փաստաթղթերին, սակայն կարևոր է դրա կիրարկումն ու իրավակիրառ պրակտիկան:
Աշխատող մարդը յուրաքանչյուր պետության տնտեսական հզորացման անկյունաքարն ու հիմքն է:
Խնդիրները լուծելու առավել լավ տարբերակ, քան սոցիալական գործընկերությունն է, միջազգային հանրությունը դեռ չի գտել, ուստի ևս մեկ անգամ կոչ ենք անում ՀՀ կառավարությանը կայացնել ու զարգացնել սոցիալական գործընկերությունը ՀՀ-ում, դրանով իսկ նպաստելով մեր քաղաքացիների սոցիալական և անվտանգային խնդիրների լուծմանը:

Աղբյուր՝ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի կայք
https://hamk.am/hoktemberi-7-y-arzhanapativ-ashkhatanqi-hamashkharhayin-orn-e

Ապահովեք արժանապատիվ աշխատավարձեր, որոնք համահունչ կլինեն կյանքի գնին

Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի աշխատողների արհմիությունը հայտարարություն է տարածել Արժանապատիվ աշխատանքի համաշխարհային օրվա կապակցությամբ։

Արժանապատիվ աշխատանքի համաշխարհային օրը հիշեցնում ենք, որ արդար վարձատրությունը, անվտանգ ու առողջ աշխատանքային պայմանները, ինչպես նաև աշխատողների հիմնարար իրավունքների ապահովումը պետք է լինի յուրաքանչյուր երկրի քաղաքականության առանցքում։
Հայաստանի պետհիմնարկների և ՏԻՄ-երի աշխատողների արհմիությունը ևս մեկ անգամ վերահաստատում է իր վճռականությունը՝ շարունակելու պայքարը մեր անդամների և ընդհանրապես բոլոր աշխատողների արժանապատիվ աշխատանքի և կյանքի համար։
Այսօր Հայաստանի հանրային ծառայողները շարունակում են մնալ խոցելի սոցիալ-տնտեսական վիճակում։ Կյանքի գինը տարեցտարի աճում է, իսկ աշխատավարձերը չեն աճում համապատասխանորեն՝ կրճատելով աշխատողների գնողունակությունը և աշխատանքի արդյունավետությունը։
Շատ ծառայողներ իրենց ընտանիքների նվազագույն կարիքները հոգալու համար ստիպված են հավելյալ եկամտի աղբյուրներ փնտրել՝ սեփական առողջության ու կյանքի որակի հաշվին։
Մտահոգիչ է, որ պետական ծառայողների համար մինչ օրս բացակայում է կառավարության կողմից լիազորված ճյուղային բանակցող մարմինը, ինչը խոչընդոտում է աշխատողների կոլեկտիվ բանակցելու հիմնարար իրավունքի իրագործմանը։
Մինչ այսօր այդպես էլ չի ստորագրվել Հանրապետական կոլեկտիվ պայմանագիրը։ Ավելին, անհանգստացնող է, որ որոշ ղեկավարների կողմից ճնշումներ և ոտնձգություններ է իրականացվում արհմիությունների նկատմամբ։ Դրան դիմադրելու համար Հայաստանում բացակայում են օրենսդրական և ինստիտուցիոնալ բավարար մեխանիզմներ։ Սա ոչ միայն խախտում է միջազգային ստանդարտները, այլև վտանգում է արհմիությունների ազատ գործունեությունն ու աշխատողների իրավունքների պաշտպանությունը։
Որպես հազարավոր հանրային ծառայողների շահերը ներկայացնող ճյուղային հանրապետական արհմիություն՝ մենք կոչ ենք անում կառավարությանը.
-ապահովել արժանապատիվ աշխատավարձեր, որոնք համահունչ կլինեն կյանքի գնին
-իրական քայլերով երաշխավորել կոլեկտիվ բանակցությունների իրավունքի իրականացումը
-ստեղծել և ամրապնդել արհմիությունների պաշտպանության օրենսդրական և ինստիտուցիոնալ մեխանիզմներ
-վերջապես ստորագրել Հանրապետական կոլեկտիվ պայմանագիրը
-առաջ տանել աշխատաժամանակի կրճատման օրինագիծը՝ նվազեցնելով աշխատողների ծանրաբեռնվածությունը
կատարել օրենսդրական փոփոխություններ՝
- վերացնելով հանրային ծառայողների համար սահմանված տարիքային շեմը
- թույլ տալով պետական ու համայնքային ծառայողներին աշխատանքային ժամերից դուրս կատարել վարձատրվող այնպիսի աշխատանք, որը չի հակասի նրանց պաշտոնեական պարտականություններին և չի առաջացնի շահերի բախում։
Մենք ակնկալում ենք և հուսով ենք, որ իշխանություններն ականջալուր կլինեն մեր բարձրացրած խնդիրներին, ինչն անհրաժեշտ է սոցիալական արդարության համար։

© 2008 - 2021 «Հրապարակ օրաթերթ»

Ամբողջական հոդվածը կարող եք կարդալ այս հասցեով՝ **https://shorturl.at/7LTrC**

«Արժանապատիվ աշխատանք» արշավ

Արժանապատիվ աշխատանքի համաշխարհային օրվան ընդառաջ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան կազմակերպել է իրազեկման հանդիպումների շարք Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի և Շիրակի մարզերի արհմիութենականների հետ։
Հանդիպումների նպատակն էր քննարկել արժանապատիվ աշխատանքի հիմնարար սկզբունքները, աշխատանքային իրավունքների պաշտպանությունը և սոցիալական արդարության ամրապնդման ուղիները։

Արշավի վերաբերյալ ամփոփ տեսահոլովակը կարող եք դիտել՝ հետևելով հղմանը.
https://www.facebook.com/reel/2306884943160412

‹‹Ուսուցչի օր›› և ‹‹Գրադարանավարի օր›› մասնագիտական տոների կապակցությամբ ՃՀՄ-ում կազմակերպված ընդունելության

2025թ.հոկտեմբերի 9-ին ՀԱՄԿ-ի միջոցառումների համար նախատեսված թիվ 808 դահլիճում տեղի ունեցավ հանդիսավոր ընդունելություն՝ նվիրված ‹‹Ուսուցչի օր›› և ‹‹Գրադարանավարի օր›› մասնագիտական տոներին: Միջոցառմանը մասնակցում էին 43 արհմիության անդամներ: Նրանցից 30-ը իրենց արհմիութենական կազմակերպությունների կողմից ներկայացված էին Հայաստանի մշակույթի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների Ճյուղային հանրապետական միության պատվոգրով պարգևատրման: Միջոցառման մասնակիցների թվում էին նաև ՃՀՄ-ի գործկոմի անդամներ, արհեստակցական կազմակերպությունների նախագահներ: Հրավիրվածների թվում էին ՀԱՄԿ-ի նախագահ Էլեն Մանասերյանը, ՈՒՀԿ–ի ղեկավար Վարդուհի Բրուտյանը, Գավառի տարածքի մշակույթի աշխատողների արհեստակցական կազմակերպության նորընտիր նախագահ Լուսինե Դեղոյանը, Գավառի Հայրապետ Խաչատրյանի /Կոլոտի/ անվան արվեստի դպրոցի երգեցողության դասատու Նարինե Գոզեյանը, 4-րդ և 6-րդ դասարանների աշակերտներ Դավիթ Դավթյանը և Լևինե Մկրտչյանը:

Բացման խոսքով հանդես եկավ ՃՀՄ-ի նախագահ Էսմա Սիմոնյանը: Նա ողջունեց ներկաներին տոների կապակցությամբ և անդրադարձավ հասարակության ուսուցման, դաստիարակության, արժեքային համակարգի ձևավորման գործում ուսուցիչների և գրադարանավարների կատարած անգնահատելի աշխատանքի նշանակությանն ու կարևորությանը: Նշեց, որ Հայաստանի մշակույթի աշխատողների Ճյուղային արհմիությունը արդեն ավանդույթ է դարձրել մշակույթի ոլորտի գրեթե բոլոր մասնագիտական տոներին (թատրոնի, թանգարանի, գրադարանավարի, ուսուցչի) նվիրված ամենամյա միջոցառումների կազմակերպումը՝ նպատակ ունենալով կարևորելու, արժևորելու և մեծարելու ոլորտի աշխատողներին և նրանց կատարած մեծ աշխատանքը:

ՃՀՄ-ի նախագահը թվով 30 գրադարանավարի և ուսուցչի պարգևատրեց Հայաստանի մշակույթի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների Ճյուղային Հանրապետական միության պատվոգրով և 15 հազարական դրամով:

Ներկաներին տոների կապակցությամբ շնորհավորեց և արհմիության խնդիրների մասին խոսեց ՀԱՄԿ-ի նախագահ Էլեն Մանասերյանը:

Ելույթ ունեցան ուսուցիչներին և գրադարանավարներին շնորհավորելու եկած Գավառի Հայրապետ Խաչատրյանի (Կոլոտի) անվան արվեստի դպրոցի սաները. որոնք իրենց կատարումներով նոր շունչ հաղորդեցին տոնական տրամադրությանը: Այնուհետև մասնակիցները լուսանկարվեցին, և տոնական միջոցառումն ավարտվեց ֆուրշետի սեղանների շուրջ ջերմ և անկեղծ մթնոլորտում՝ հաջորդ տարի նորից հանդիպելու ակնկալիքով:



Աղբյուր՝Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի պաշտոնական կայք
https://hamk.am/tekhekuyt-usutschi-or-ev-gradaranavari-or-masnagitakan-toneri-kapaktsutyamb-chhm-um-kazmakerpvats-yndunelutyan-masin

Սեմինար Մասիսի տարածքային արհմիության համար

Հոկտեմբերի 11-ից 12-ը Ծաղկաձորի «Գրողների տանն» անցկացվեց Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի աշխատողների արհմիության արտագնա սեմինարը Մասիսի պետական ու համայնքային աշխատողների տարածքային արհմիության համար։

Երկօրյա սեմինարին տարածքային արհմիության ղեկավար ակտիվի ներկայացուցիչներն ավելի մոտիկից ծանոթացան արհմիությունների նպատակներին, գործառույթներին ու իրավունքներին, ճյուղային արհմիության գործունեությանը, Հայաստանում արհմիությունների կառուցվածքին, արհմիությանը վերաբերող օրենսդրական դաշտին, փոխանակվեցին մտքերով։

Սեմինարի երկրորդ օրը նույնպես անցավ թեժ քննարկումների ներքո։ Մասիսի պետհիմնարկների տարածքային արհմիության ներկայացուցիչները մի շարք հարցեր ու խնդիրներ բարձրացրեցին աշխատանքային հարաբերությունների, աշխատաժամանակի, առողջության համապարփակ ապահովագրության, աշխատանքային օրենսգրքի վերաբերյալ, ինչպես նաև կոլեկտիվների ոորտներին առընչվող տարբեր հարցերի ու սոցիալական խնդիրների մասին։ Քննարկվեցին նաև հետագա անելիքները։

Աղբյուր՝Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի աշխատողների արհմիության պաշտոնական կայք
https://arhmiutyun.org/2025/10/12/weekend-seminar-masis-regional-union-oct-2025/

Հանդիպում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արսեն Թորոսյանի հետ

2025 թվականի հոկտեմբերի 20-ին Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը և նախագահի տեղակալ Տիրուհի Նազարեթյանը հանդիպել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արսեն Թորոսյանի հետ։

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են աշխատանքի ոլորտում համագործակցության ընթացիկ ուղղություններն ու հնարավոր նոր նախաձեռնությունները։ Քննարկման առանցքում եղել է արտադատական կարգով աշխատանքային վեճերի կարգավորման նախագիծը, որի նպատակն է ներդնել առավել արագ, արդյունավետ և հասանելի մեխանիզմներ՝ աշխատողների և գործատուների միջև առաջացող վեճերի լուծման համար, ինչպես նաև անդրադարձ է կատարվել սոցիալական գործընկերության ինստիտուտի զարգացմանը, արհմիությունների դերի հզորացմանը և աշխատողների իրավունքների պաշտպանությանը։ ՀՀ ԱՍՀՆ նախարար Ա. Թորոսյանը կարևորել է արհմիությունների ներուժի լիարժեք օգտագործումը՝ ընդգծելով, որ ուժեղ, անկախ և ակտիվ արհմիությունները ժողովրդավարական հասարակության և արդար սոցիալական քաղաքականության անբաժան մասն են։

Աղբյուր՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ֆեյսբուքյան էջ

Հանդիպում ՊԵԿ-ի ներկայացուցիչների հետ

Հոկտեմբերի 23-ին ՀԱՄԿ-ի նիստերի դահլիճում կայացավ տեղեկատվական հանդիպում՝ Պետական եկամուտների կոմիտեի և ճյուղային արհմիությունների ներկայացուցիչների միջև։
ՀՀ ՊԵԿ ՀՎՍ վարչության պետի տեղակալ Գոհար Արաբաջյանը և ՀՎՍՎ թիվ 1 բաժնի գլխավոր հարկային տեսուչ Նոնա Ղալեչյանը մասնակիցներին ներկայացրեցին ֆիզիկական անձանց եկամուտների հայտարարագրման կարգի, փուլերի և ձևաչափի վերաբերյալ մանրամասն պարզաբանումներ։
Հարց ու պատասխանի և քննարկման ընթացքում Գոհար Արաբաջյանը նշեց, որ ինքնաշխատ եղանակով հայտարարագրի լրացվելու վերաբերյալ նախագիծը դեռևս քննարկվում է և այս պահին չի գործում։ Հետևաբար մինչև նոյեմբերի 1-ը օրենքով նշված բոլոր կատեգորիայի քաղաքացիների համար պարտադիր է հայտարարագիր ներկայացնելը։
ՀԱՄԿ-ի նախագահի տեղակալ Տիրուհի Նազարեթյանը նշեց, որ հատկապես մարզերում բնակվող և կարճաժամկետ պայմանագրերով աշխատող քաղաքացիների համար նախագիծը դժվարություններ և լրացուցիչ ծախսեր է առաջացնում։
Շատերը չունեն համապատասխան գործիքներ և տեխնիկապես չեն տիրապետում ընթացակարգին, մինչդեռ՝ ՊԵԿ-ի աշխատակիցների կողմից տրամադրվող աջակցությունը Երևան քաղաքի բնակիչների համար է հասանելի։
Մասնակիցները կարևորեցին որոշ կատեգորիայի քաղաքացիների համար հայտարարագրի պարզեցված ընթացակարգ ներդնելու գործընթացը։

Աղբյուր՝ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի պաշտոնական կայք
https://hamk.am/handipum-peki-i-nerkayatsutsichneri-het

ՄԱԿ-ի հիմնադրման 80-ամյակին նվիրված միջոցառում

Հոկտեմբերի 24-ին ՀԱՄԿ-ի նախագահի տեղակալ Տիրուհի Նազարեթյանը և իրավաբան՝ Աննա Բարիկյանը մասնակցել են ՄԱԿ-ի հիմնադրման 80-ամյակին նվիրված միջոցառմանը:
Շնորհավորական ուղերձով հանդես են եկել Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող Ֆրանսուազ Ժակոբը և ՀՀ փոխվարչապետ Միհեր Գրիգորյանը:
Կարևորվել է կազմակերպության առանցքային դերը խաղաղության, զարգացման, մարդու իրավունքների ամրապնդման հարցում:
Հայաստանի Հանրապետությունն անդամակցում է ՄԱԿ-ին 1992 թվականից:

Աղբյուր՝Հայաստանի արհմիությունների պաշտոնական կայք
https://hamk.am/mak-i-himnadrman-80-amyakin-nvirvats-mijotsarum

Սեմինար Գեղարքունիքի մարզի կոլեկտիվների համար

Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի աշխատողների արհմիությունը հոկտեմբերի 25-ից 26-ն անցկացրեց հերթական վիքենդային արտագնա սեմինարը: Այս անգամ արհմիության մասին ավելի մանրամասն տեղեկացան Գեղարքունիքի մարզում գործող մեր անդամ կազմակերպությունները:

Երկօրյա թրեյնինգի ընթացքում մարզային արհմիությունների ակտիվը մոտիկից ծանոթացավ արհմիության էությանը, գործիքներին, իրավունքներին: Խմբային աշխատանքներով քննարկեցին կազմակերպված աշխատողների ավելի արդյունավետ գործունեություն ծավալելու ուղիները:

Աղբյուր՝ Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի աշխատողների արհմիություն
https://arhmiutyun.org/2025/10/27/gegharquniq-province-seminar-wrh-2025/

Երկխոսության կարևոր հարթակ

«Ճարտարապետություն և շինարարություն» ամսագրի 2025 թ., #7-8 (233-234) համարում անդրադարձ է կատարվել Շինարարության և շինանյութերի արդյունաբերության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության կողմից կազմակերպված սեմինարին։

Երկխոսության կարևոր հարթակ

«Մեր՝ շինարարների և շինանյութերի արդյունաբերական կազմակերպությունների արհիմության փորձը ցույց է տալիս, որ համատեղ ձևաչափով կազմակերպված սոցիալական երկխոսությունը (արհիմություն-գործատու-պետություն) կանխում է մեծաթիվ կոնֆլիկտներ և օգնում պաշտպանել աշխատողների շահերը նույնիսկ դժվար իրավիճակներում: Սոցիալական պաշտպանությունը միայն պետության պարտավորությունը չէ, այն նաև արհիմությունների՝ աշխատողի արժանապատվությունը պահպանելու առաքելությունն է». օրվա գլխավոր թեման այսպես ներկայացրեց ճյուղային արհիմության նախագահ, սեմինարի աշխատանքները համակարգող և վարող Լյուդվիգ Սարգսյանը:

Արժանապատիվ աշխատանքի միջազգային օրվան նվիրված երկօրյա սեմինար-խորհրդակցությունը, որն անցկացվեց Ծաղկաձորի օլիմպիական մարզաբազայի հյուրանոցային մասնաշենքում, սոցիալական երկխոսության այդպիսի մի հարթակ էր, որը Հայաստանի շինարարների միության հետ համատեղ կազմակերպել էր Շինարարության և շինանյութերի արդյունաբերության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը:

Մասնագիտական հանրությանը կարևոր և օգտակար տեղեկատվությամբ ապահովող նմանատիպ միջոցառումների անցկացումը կարևորեցին նաև Քաղաքաշինության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Դավիթ Գրիգորյանը, արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը և Շինարարների միության նախագահ Վահան Հարությունյանը՝ ողջունելով սեմինար-խորհրդակցության մասնակիցներին:

Զեկուցումները բազմաթեմա էին և հետաքրքիր. աշխատողների՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված իրավունքներ (Արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյան և կոնֆեդերացիայի իրավաբան Անա Բարիկյան), շինարարության մեջ նոր տեխնոլոգիաների սոցիալական ազդեցությունը (ՃՇՀԱՀ ամբիոնի դասախոս Աշոտ Մխիթարյան), շինարարական կադրերի պատրաստման և որակավորման բարձրացման խնդիրներ (ՃՇՀԱՀ դեկան Արամ Սահակյան), շինոլորտում սոցիալական փաթեթներ և ապահովագրական մեխանիզմներ (Հովսեփ Բեգյան, Սոնա Պետրոսյան, «Լիգա ինշուրանս» ապահովագրական ընկերություն), Կանաչ շինարարություն և բնապահպանական ժամանակակից պահանջներ (Ամերիկյան համալսարանի դասախոս Հարություն Ալպետյան):

Արժանապատիվ աշխատանքը՝ որպես հոգեբանական կայունության նախապայման. միջոցառման նպատակն ընդհանրացնող ու ամփոփող այս թեման էլ ներկայացրեց ԵՊՀ դասախոս Դավիթ Ամիրյանը:

Սեմինար-խորհրդակցությանը մասնակցում էին նաև Հայաստանի շինարարների միության պատվավոր նախագահ Գագիկ Գալստյանը, Միության տնօրեն Գուրգեն Մինասյանը, Քաղաքաշինության կոմիտեի վարչության պետ Նշան Մարտիրոսյանը, ՃՇՀԱՀ պրոֆեսորներ Վարդգես Գրիգորյանը և Սարգիս Թովմասյանը:

Վերջում բոլոր մասնակիցներին հանձնվեցին հավաստագրեր, իսկ կազմակերպիչներին՝ շնորհակալագրեր:

ՀԱՄԿ-ի նախագահ Էլեն Մանասերյանը և տեղակալ Տիրուհի Նազարեթյանը մասնակցել են ԱԺ ԱՍՀ հանձնաժողովի քննարկմանը



ԱԺ ԱՍՀ մշտական հանձնաժողովը՝ Հերիքնազ Տիգրանյանի գլխավորությամբ, հոկտեմբերի 27-ին կազմակերպել էր աշխատանքային քննարկում, որի առանցքում Աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքի նախագիծն էր:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության մշակած նախագիծն առնչվում է աշխատանքային վեճերի լուծման արտադատական մեխանիզմի ներդրմանը:

Օրենքի նախագծով քաղաքացուն ընձեռվում է ընտրության հնարավորություն՝ դիմելու դատարան կամ աշխատանքային վեճերի լուծման հանձնաժողով:

Նախատեսվում է Հանձնաժողովի կազմ, բաղկացած՝ պետության, արհմիությունների և գործատուների ներկայացուցիչներից: Մասնակիցները ներկայացրել են նախագծի վերաբերյալ դիտարկումներ, առաջարկներ և հնարավոր խնդիրներ: Առաջիկայում նախատեսվում են նոր հանդիպումներ:

Հանդիպմանը մասնակցել են Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արսեն Թորոսյանը, Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Սլավիկ Սարգսյանը, գործատուների միության և այլ շահագրգիռ կառույցների ներկայացուցիչներ:

Աղբյուր՝ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի պաշտոնական կայք
https://hamk.am/hamk-i-nakhagah-elen-manaseryany-ev-tekhakal-tiruhi-nazaretyany-masnaktsetsin-azh-ash-handznazhokhovi-qnnarkmany

«Խնամքի աշխատանքի մարտահրավերները և հնարավորությունները» թեմայով պանելային քննարկում

Հոկտեմբերի 29-ին ՀԱՄԿ-ի նախագահի տեղակալ Տիրուհի Նազարեթյանը մասնակցել է «Խնամքի աշխատանքի մարտահրավերները և հնարավորությունները թեմայով» պանելային քննարկմանը:

Իր խոսքում Նազարեթյանը նշել է, որ մասնավոր հատվածում խնամքի աշխատանք իրականացնողները մեծամասամբ ոչ ֆորմալ են աշխատում և, որպես հետևանք, առավել հաճախ բախվում աշխատանքային իրավունքի խախտումների ամենատարբեր բռնության դեպքերի: ՀՀ օրենսդրական փոփոխությունները, հատկապես արհեստակցական միությունների մասին օրենքի փոփոխությունների նախագիծը հնարավորություն է ընձեռում արհմիությունում միավորել նաև նման կատեգորիայի աշխատողներին: Ինչը կնպաստի առավել արդյունավետ աշխատել՝ իրազեկել, ներկայացնել և պաշտպանել նրանց իրավունքները և շահերը, ներառել ֆորմալ դաշտում և ստանալ սոցիալական երաշխիքներ:

Արհմիությունները աշխատում են այդ ուղղությամբ:

Աղբյուր՝Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի պաշտոնական կայք
https://hamk.am/khnamqi-ashkhatanqi-martahravernery-ev-hnaravorutyunnery-temayov-panelayin-qnnarkum

ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁ

Հայաստանի պատվիրակության ՄԿՈՒ ուսումնաճանաչողական այցը Նիդերլանդերի Թագավորություն

Նոյեմբերի 2-ից 7-ը Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի, Հայաստանի գործատուների հանրապետական միության, ՄԿՈՒ քաղաքականության մշակման և որակի ապահովման մարմինների, ՄԿՈՒ հաստատությունների և գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչներից կազմված պատվիրակությունը գտնվում էր Նիդերլանդների Թագավորությունում:

Փորձի փոխանակման շրջանակում պատվիրակությունն այցելել է Նիդերլանդների կրթության տեսչություն, **MBO Raad, SBB, ROC Mondriaan, Summa College, CINOP** կազմակերպություններ, ինչպես նաև **The Chocolate Factory** ընկերություն՝ տեղում ծանոթանալով կրթության և աշխատաշուկայի համագործակցության հաջող օրինակներին:

Ուսումնասիրած փորձը կարևոր աջակցություն կդառնա Հայաստանի ՄԿՈՒ ոլորտում իրականացվող բարեփոխումների համար՝ նպաստելով լիցենզավորման համակարգի կատարելագործմանը, կառավարման և որակի ապահովման մեխանիզմների զարգացմանը, ինչպես նաև կրթության և աշխատաշուկայի պահանջների համապատասխանեցմանը:

Այցը կազմակերպվել էր Գերմանիայի կառավարության կողմից պատվիրակված և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից իրականացվող ՄՀՁ ՄԿՈՒ ծրագրի շրջանակում:

«Ի՞նչ է արհմությունը։ Արհմիության դերը կոլեկտիվ աշխատանքային հարաբերություններում» թեմայով սեմինար

Հայաստանի տրանսպորտի և հաղորդակցության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը 2025թ նոյեմբերի 8-ից 9-ը Ծաղկաձորի «Ռոսիա» հյուրանոցում կազմակերպել էր «Ի՞նչ է արհմիությունը։ Արհմիության դերը կոլեկտիվ աշխատանքային հարաբերություններում» թեմայով սեմինար։

Սեմինար սեմինարավարների համար

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան, համագործակցելով «Սոլիդարիթի Սենթր» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության հետ, նոյեմբերի 14-ից 16-ը կազմակերպել էր սեմինար սեմինարավարների համար՝ նպատակ ունենալով շատ արհմիութենականների ընդգրկել արհմիութենական սեմինարավարների շարքերում:



Արհմիութենական կոլեկտիվները մասնակցեցին Թենիսի մրցաշարին

Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի աշխատողների արհմիությունը նոյեմբերի 16-ին Երեբունի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնում անցկացրեց սեղանի թենիսի թիմային մրցաշար՝ նվիրված տեղական ինքնակառավարման օրվան:
Մրցում էին պետական ու համայնքային ոլորտի կոլեկտիվներ:
Ճյուղային արհմիության գավաթին արժանացավ ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի արհմիության թիմը՝ զբաղեցնելով առաջին տեղը:
Երկրորդ տեղը գրավեց Երեբունու մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի արհմիության թիմը, իսկ երրորդ տեղը զբաղեցրեց Խարբերդի մասնագիտացված մանկատան արհմիության թիմը:
Պատվավոր 4-րդ տեղում է Կոնդի առանձնատների ՊՈԱԿ-ի արհմիության թիմը:
Անհատական հաշվով առաջին տեղը գրավեց Ալլա Շախկուլյանը (ՊԵԿ), երկրորդ տեղը՝ Իրինա Մարկարյանը (Երեբունու մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն), երրորդը՝ Էդուարդ Տոնյանը (Խարբերդի մասնագիտացված մանկատուն):

Աղբյուր՝ Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի աշխատողների արհմիության պաշտոնական կայք
https://arhmiutyun.org/2025/11/17/staffs-compete-in-ping-pong-tournament-2025/

ՀԱՄԿ-ի աշխատանքային հարաբերություններում հավասարության հարցերով հանձնաժողովը միացել է ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակին

Հայաստանում ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակին ընդառաջ, նոյեմբերի 22-ից 23-ին ՀԱՄԿ–ի աշխատանքային հարաբերություններում հավասարության հանձնաժողովի կողմից կազմակերպվել է «Արհմիությունները հանուն հավասար հնարավորությունների և ընդդեմ գենդերային խտրականության» թեմայով երկօրյա աշխատաժողով:
Աշխատաժողովի ընթացքում տեղի են ունեցել քննարկումներ, ներկայացվել են վերլուծություններ և հետազոտություններ աշխատաշուկայում գենդերազգայունության վերաբերյալ, մասնավորապես ներկայացվել է հանձնաժողովի կողմից պատրաստված «Խտրականության դեպքերը ՀՀ աշխատանքի տեղավորման հարթակներում» թեմայով հետազոտությունը: Ներկայացվել է նաև ՄԱԶԾ Պարգևադրոշմի մեթոդաբանությունը և պետական ինստիտուտների գենդերային հավասարության գնահատումը:
Աշխատաժողովի մասնակիցները հնարավորություն են ունեցել լսելու «Հավասարությունը և հակախտրականությունը ՀՀ աշխատանքային օրենսգրքում և աշխատավայրում» և «Ոտնձգությունների ու բռնությունների վերացմանն ուղղված արհմիութենական մոտեցումները» թեմաներով բանախոսություններ:

ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի և Հայաստանում Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի համագործակցության շրջանակում 2025թ. նոյեմբերի 25-ին ներկայացվել է «Նվազագույն աշխատավարձը և սոցիալ-տնտեսական իրողությունները Հայաստանի Հանրապետությունում» հետազոտության արդյունքները, որը իրականացրել է Հանրային և սոցիալական քաղաքականության փորձագետ Ռուբեն Մարկոսյանը:

Միջոցառմանը ներկա էին ՀՀ ԱԺ Աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հերիքնազ Տիգրանյանը, «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ռուբեն Սարգսյանը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներկայացուցիչները և ՀԱՄԿ-ի անդամ ճյուղային հանրապետական միության նախագահները:

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը ողջույնի խոսքում նշել է, որ հետազոտությունն իրականացվել է Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախաձեռնությամբ՝ նպատակ ունենալով վերհանել Հայաստանի Հանրապետությունում գնաճի և աշխատողների եկամուտների միջև առկա անհամապատասխանությունը, Կենսապահովման նվազագույն զամբյուղի հաշվարկի և աշխատավարձի ինդեքսավորման կարգի բացակայության խնդիրները:

Հետազոտության ներկայացմանը հետևել է կարծիքների փոխանակում և քննարկում:

Հետազոտությունը՝ հետևյալ հղումով.

https://hamk.am/nvazaguyn-ashkhatavardzy-ev-sotsial-tntesakan-irokhutyunnery-hayastani-hanrapetutyunum-hetazotutyun

Հայաստանում նվազագույն աշխատավարձի բարձրացման հարցը կրկին օրակարգում է

«ՖՐԻ ՆՅՈՒԶ» հեռուստաընկերությունը պատրաստել է տեսանյութ «Նվազագույն աշխատավարձը և սոցիալ-տնտեսական իրողությունները Հայաստանի Հանրապետությունում» հետազոտության արդյունքների և դրա ներկայացման միջոցառման մասին:

Տեսնյութը կարող եք դիտել՝ հետևելով հղմանը.
https://tinyurl.com/5n7f5f98

Հանդիպում Գյումրու ՀՀ թեթև արդյունաբերության ոլորտի արհկոմի նախագահների, արտադրության և արհմիության մի խումբ վետերանների հետ

2025թ. նոյեմբերի **26**-ին ՀՀ թեթև արդյունաբերության աշխատողների արհմիության ՃՀՄ-ի նախագահ Սրապիոն Առաքելյանի նախաձեռնությամբ Գյումրիում տեղի է ունեցել սեմինար-հանդիպում ՃՀՄ անդամ արհմիութենական կազմակեպությունների արհկոմի նախագահների, արտադրության և արհմիութենական մի խումբ վետերանների հետ, որին հրավիրված էր ՀԱՄԿ-ի նախագահ՝ Էլեն Մանասերյանը:
Բացման խոսքով հանդես է եկել ՃՀՄ նախագահ Ս.Առաքելյանը: Սեմինարը վարել է ՀԱՄԿ-ի նախագահ Է.Մանասերյանը:
Ներկայացվել են ՀՀ-ում աշխատանքային իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրությունը, «Արհեստակցական միությունների մասին» և «Գործատուների միությունների մասին» ՀՀ օրենքներում սպասվող փոփոխությունները,ՀԱՄԿ-ի գործունեությունն ու կատարած աշխատանքները, ՀՀ կառավարության, Ազգային ժողովի հանձնաժողովների հետ համագործակցությունը, կոլեկտիվ պայմանագրերի կատարման վերահսկողության գործում արհկոմների, արհմիության ակտիվի դերը, Կառավարության, ՀԱՄԿ-ի և ՀԳՀՄ-ի միջև եռակողմ պայմանագրի կնքման ընթացքը:
Հարցերով ու ելույթով հանդես են եկել «Արշալույս» ԲԲԸ-ի, «Լենտեքս», «Նելլի», «Ձաքարյան ջինս», «Արթենիա» ՍՊԸ-ների, «Գյուլբեկյան ԱՁ»-ի և «Գալստյան ԱՁ»-ի արհկոմի նախագահներն ու անդամները:

ՀԱՄԿ-ում ներկայացվել է աշխատանքային պայմանագրերի կնքման թվային համակարգի տեխնիկական գործընթացը



Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանի նախաձեռնությամբ, 2025թ. նոյեմբերի 28-ին կայացել է հանդիպում, որի ընթացքում ներկայացվել է աշխատանքային պայմանագրերի կնքման թվային համակարգից օգտվելու տեխնիկական գործընթացը:

Միջոցառումը, որին մասնակցել են ՀԱՄԿ-ի ճյուղային հանրապետական միությունների ներկայացուցիչները, մեկնարկել է ՀԱՄԿ-ի նախագահի տեղակալ Տիրուհի Նազարեթյանի ողջույնի խոսքով:

Աշխատանքային պայմանագրերի կնքման թվային համակարգի հնարավորությունները, օգտագործման փուլերը և գործնական կիրառման առանձնահատկությունները ներկայացրել են Հայաստանի Հանրապետության Պետական եկամուտների կոմիտեի «Ջի Սոյյուշնս» պետական ոչ առևտրային կազմակերպության թվային նախագծերի կառավարման դեպարտամենտի վերլուծաբաններ՝ Աննա Պողոսյանը և Մարիամ Մակարյանը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են համակարգի տեխնիկական մանրամասները, և մասնակիցները հնարավորություն են ունեցել ներկայացված գործառույթների և կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ իրենց հարցերն ուղղել մասնագետներին:

ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁ

Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումի Գագաթնաժողով

2025թ. դեկտեմբերի 2-4-ը Բրյուսելում անցկացվել է Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումի Գագաթնաժողովը, որին մասնակցել են քաղաքացիական հասարակության ավելի քան 250 ներկայացուցիչներ և որոշում կայացնողներ ԵՄ-ից և Արևելյան գործընկերության երկրներից:

Գագաթնաժողովի մոդերացիան այս տարի ևս վստահվել էր ՀԱՄԿ-ի նախագահ, ԱԼԳ ՔՀԿ ֆորումի 5-րդ աշխատանքային խմբի համակարգող և ֆորումի մշտական հանձնաժողովի անդամ՝ Էլեն Մանասերյանին, ով հանդես է եկել ելույթով: Ֆորումին հատուկ ելույթով հանդես է եկել նաև ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը:

Քաղաքացիական հասարակության գագաթնաժողովի նպատակն էր սահմանել տարածաշրջանային համագործակցության օրակարգ Արևելյան գործընկերության հիմնական առաջնահերթությունների շրջանակներում կարևորագույն թեմաների շուրջ, ներառյալ՝ ժողովրդավարական և հասարակական դիմադրողականությունը, կայուն տնտեսական զարգացումը, անվտանգությունը և տարածաշրջանային կապակցվածությունը:

Միջոցառումը ապահովել է բարձր մակարդակի տեսանելիություն տարածաշրջանում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) կողմից իրականացվող աշխատանքին:

Միջոցառումը դարձել է ՔՀԿ-ների, Արևելյան գործընկերության երկրների կառավարությունների, ԵՄ անդամ պետությունների և ԵՄ ինստիտուտների միջև երկխոսության հարթակ:

Աղբյուր՝ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի պաշտոնական կայքէջ

Արդյունաբերության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը միացել է UNiTE համաշխարհային արշավին՝ թվային բռնության դեմ

IndustriALL համաշխարհային միության անդամ Արդյունաբերության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը միացել է **UNiTE** արշավին՝ նպատակ ունենալով վերացնել կանանց և աղջիկների նկատմամբ թվային բռնությունը: Այս քայլով արհմիությունները վերահաստատում են իրենց հանձնառությունը՝ պայքարելու աշխատանքի աշխարհում ամենաարագ աճող և լուրջ մարտահրավերներից մեկի դեմ:

Դեկտեմբերի 4-ին ճյուղային միությունը կազմակերպել է հանդիպում-սեմինար, որին մասնակցել են 19 անդամ արհմիությունների ներկայացուցիչներ: Միջոցառման նպատակն էր բարձրացնել իրազեկվածությունը, խթանել փորձի փոխանակումը և քննարկել աշխատողների վրա թվային բռնության ազդեցությունը: Հանդիպման ընթացքում ընդգծվել է, որ թվային բռնությունը՝ ներառյալ առցանց ոտնձգությունները, սպառնալիքները, անցանկալի հաղորդագրությունները և անձնական տվյալների չարաշահումը, գնալով ավելի լայն տարածում է ստանում:

Ճյուղային միության նախագահը նշել է, որ անվտանգ աշխատանքային միջավայրի ապահովումը թե՛ առցանց, թե՛ անցանց արհմիությունների հիմնական և անբաժան պարտականությունն է: Քանի որ թվային հարթակները դարձել են աշխատանքի կազմակերպման և հաղորդակցության կենտրոնական բաղադրիչ, աշխատողների պաշտպանությունը թվային սպառնալիքներից այսօր կարևորագույն պայման է աշխատանքային իրավունքների լիարժեք ապահովման համար:

Հանդիպման առանցքային թեմաներից մեկն Աշխատանքի միջազգային կազմակերպության թիվ 190 կոնվենցիան էր, որը Հայաստանի կողմից վավերացվել է սեպտեմբերին և կարևոր քայլ է աշխատավայրում բռնության և ոտնձգությունների վերացման ուղղությամբ: Ընդգծվել է, որ ԱՄԿ թիվ 190 կոնվենցիայի արդյունավետ իրականացումը պահանջում է համատեղ և համակարգված աշխատանք կառավարության, գործատուների և արհմիությունների միջև՝ ներառելով ներքին քաղաքականությունների բարելավում, իրազեկման միջոցառումներ և մատչելի ու վստահելի հաշվետվությունների մեխանիզմների ստեղծում:

UNiTE համաշխարհային արշավի շրջանակներում ճյուղային միությունը նախատեսում է շարունակել իրազեկման միջոցառումները, աջակցել քաղաքականությունների մշակմանը, խթանել անվտանգ թվային միջավայրի ձևավորումը և ակտիվ համագործակցել սոցիալական գործընկերների հետ:

Աղբյուր՝ IndustriALL համաշխարհային միության ֆեյսբուքյան էջ
https://www.facebook.com/IndustriALLGlobalUnion/posts/pfbid0VorGvyjhprZnMwNeN78AHAB6TFwt9vR4yW1UsAshn1jJEiHeGFUVhvezJ6jJLsvDl

Քննարկվել է ֆորմալ զբաղվածության խթանման օրակարգը Հայաստանում

ՀԱՄԿ-ի նախագահի տեղակալ Տիրուհի Նազարեթյանը մասնակցել է սոցիալական գործընկերության շրջանակում Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի, Գործատուների հանրապետական միության համագործակցությամբ և Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) նախաձեռնությամբ՝ դեկտեմբերի 4-ին կայացած՝ «Հայաստանում ֆորմալ զբաղվածության խթանումը» թեմայով աշխատաժողովին:
Քննարկվել են ֆորմալ և ոչ ֆորմալ զբաղվածության ցուցանիշներին, աշխատաշուկայի պահանջներին և միտումներին, սոցիալական տարբեր խմբերի զբաղվածության խթանման, աշխատուժի պրոֆիլավորմանն ուղղված մի շարք հարցեր:

ԵՄ – Հայաստան քաղաքացիական հասարակության հարթակի 7-րդ հանդիպում

2025 թվականի դեկտեմբերի 5-ին Բրյուսելում տեղի է ունեցել Հայաստան-ԵՄ քաղաքացիական հասարակության հարթակի 7-րդ հանդիպումը։ Հանդիպման ընթացքում Հայաստանի ներկայացուցիչները ներկայացրել են օրենքի գերակայության, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների, տրանսպորտի, էներգետիկ համագործակցության, զբաղվածության, սոցիալական քաղաքականության և հավասար հնարավորությունների վերաբերյալ զեկույցներ։ Հանդիպման վերջում Հայաստան - ԵՄ քաղաքացիական հասարակության հարթակի անդամներն ընդունել են հռչակագիր։

Հռչակագրին ամբողջությամբ կարող եք ծանոթանալ՝ հետևելով այս հղմանը. https://shorturl.at/Ali5w

Արհմիությունների դերն աղետներից հետո վերականգնման և աշխատողների պաշտպանության համակարգում

1988 թվականի դեկտեմբերի 7-ը Հայաստանի նորագույն պատմության ամենաածանր ու ողբերգական էջերից մեկն է: Սպիտակի երկրաշարժը խլել է տասնյակ հազարավոր մարդկային կյանքեր, ավերել է քաղաքներ ու գյուղեր և փոխել է երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակը: Այս ողբերգությունից անցել է ավելի քան երեք տասնամյակ, սակայն դրա դասերը շարունակում են մնալ արդիական՝ հատկապես աղետների կանխարգելման, աշխատողների պաշտպանության և վերականգնման գործընթացների կազմակերպման համատեքստում:

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան, Շինարարության և շինանյութերի արդյունաբերության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը և Հայաստանի շինարարների միությունը համատեղ կազմակերպել են Սպիտակի երկրաշարժի զոհերի հիշատակի միջոցառում և ֆորում-սեմինար: Նախաձեռնության նպատակն է եղել ոչ միայն հարգանքի տուրք մատուցել երկրաշարժի անմեղ զոհերի հիշատակին, այլև վերահիմաստավորել աղետներից հետո վերականգնման գործընթացներում արհմիությունների և մասնագիտական կազմակերպությունների դերը:

Երեք տասնամյակից ավելի անց ակնհայտ է, որ անհրաժեշտ է վերանայել և ամրապնդել այն համագործակցության ոգին, որը ձևավորվել էր երկրաշարժից անմիջապես հետո: Այդ ժամանակ միջազգային համերաշխությունը, մասնագիտական աջակցությունը և աշխատողների միասնականությունը վճռորոշ դեր են ունեցել առաջին օգնության, վերականգնման և շինարարական աշխատանքների կազմակերպման գործում: Այսօր, երբ աշխարհը բախվում է բնական և տեխնածին աղետների աճող վտանգին, նման համագործակցությունը պետք է վերածվի ինստիտուցիոնալ և կայուն մեխանիզմների:

Միջոցառումները նախատեսված են եղել երկու փուլով: Դեկտեմբերի 7-ին Սպիտակի կենտրոնական հրապարակում տեղի է ունեցել հիշատակի միջոցառում: Այս խորհրդանշական արարողությունը ևս մեկ անգամ հիշեցրել է մասնակիցներին, որ մարդկային կյանքի պաշտպանությունը պետք է լինի յուրաքանչյուր քաղաքականության և զարգացման ծրագրի հիմքում:
Դեկտեմբերի 8-ին Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայում տեղի է ունեցել ֆորում-սեմինար, որի օրակարգը ներառել է մի շարք առանցքային հարցեր: Քննարկվել են արհմիությունների դերն աղետից հետո վերականգնման գործընթացներում և աշխատողների պաշտպանության համակարգում, ինչպես նաև ժամանակակից սեյսմիկ նորմերն ու չափորոշիչները: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել բնակչության անվտանգության և պաշտպանության համակարգերին արտակարգ իրավիճակների ժամանակ, սեյսմակայուն շինարարության ոլորտում նոր կրթական և հետազոտական նախաձեռնություններին, ինչպես նաև միջազգային փորձի ուսումնասիրությանը և համագործակցության հնարավորություններին:
Սպիտակի երկրաշարժի հիշատակը մեզ պարտադրում է ոչ միայն հիշել անցյալը, այլև պատասխանատու կերպով կառուցել ապագան: Արհմիությունների, մասնագիտական կազմակերպությունների, պետական և միջազգային գործընկերների համատեղ ջանքերը կարող են ձևավորել այնպիսի համակարգ, որտեղ աղետների դեպքում մարդկային կյանքը, աշխատողի արժանապատվությունը և անվտանգությունը կլինեն անվիճելի առաջնահերթություն: Այս նախաձեռնությունը կարևոր քայլ է այդ ուղղությամբ՝ միավորելով հիշողությունը, փորձը և ժամանակակից մոտեցումները հանուն անվտանգ ու կայուն հասարակության:

«Էքստրակտիվիզմը Ֆրանսիայում և ամբողջ աշխարհում. սոցիալական կարիքները, շրջակա միջավայրի հետ կապված մտահոգությունները և կապիտալիզմի ախորժակը» թեմայով կոնֆերանս Ֆրանսիայում



Լեռնագործների, մետալուրգների և ոսկերիչների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Էդուարդ Փահլևանյանը և Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի աշխատանքային և սոցիալական իրավունքների պաշտպանության բաժնի իրավաբան Աննա Բարիկյանը մասնակցել են «Էքստրակտիվիզմը Ֆրանսիայում և ամբողջ աշխարհում. սոցիալական կարիքները, շրջակա միջավայրի հետ կապված մտահոգությունները և կապիտալիզմ ախորժակը» թեմայով կոնֆերանսին, որը տեղի է ունեցել 2025 թվականի դեկտեմբերի 10-ին:

Ճյուղային հանրապետական միության նախագահ Էդուարդ Փահլևանյանը մասնակցել է «Հանքարդյունաբերության բնապահպանական խնդիրները» և «Արհմիությունների պահանջները, մարտահրավերները և հեռանկարները» թեմաներով պանելային քննարկումներին:

ՀԱՄԿ-ը հյուրընկալել է Արհմիությունների միջազգային կոնֆեդերացիայի գլխավոր քարտուղար Լյուկ Թրայանգլին





2025 թվականի դեկտեմբերի **10**-ին Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան հյուրընկալեց Արհմիությունների միջազգային կոնֆեդերացիայի (**ITUC**) գլխավոր քարտուղար Լյուկ Թրայանգլին, ում այցը նպատակ ուներ խորացնել համագործակցությունը և քննարկել աշխատողների սոցիալական պաշտպանությանը վերաբերող մարտահրավերները։

Պարոն Թրայանգլը հանդիպեց ՀԱՄԿ-ի նախագահ Էլեն Մանասերյանի և ՀԱՄԿ-ի անդամ ճյուղային հանրապետական միությունների նախագահների հետ։

Հանդիպման ընթացքում քննարկվեցին ՀՀ աշխատանքային իրավունքների պաշտպանության մի շարք կարևոր հարցեր, այդ թվում՝ սոցիալական երկխոսության զարգացումը, աշխատողների տնտեսական և սոցիալական երաշխիքների ուժեղացումը, ինչպես նաև արհմիությունների կարողությունների ընդլայնումը։

Քննարկվեց նաև նվազագույն աշխատավարձի ներկայիս ցածր շեմը, որը չի համապատասխանում նվազագույն կենսապահովման ցուցանիշին և շարունակում է մնալ արհմիությունների հիմնական մտահոգություններից մեկը։ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը շեշտեց, որ գործող չափը չի ապահովում աշխատողի և նրա ընտանիքի արժանապատիվ կյանքը՝ ընդգծելով, որ սա խորացնում է սոցիալ-տնտեսական անհավասարությունը և նպաստում է երիտասարդների արտագաղթի աճին։

Էլեն Մանասերյանի նախաձեռնությամբ պարոն Թրայանգլը հանդիպեց նաև Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Լուսինե Քոչարյանի և Ազգային Ժողովի աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հերիքնազ Տիգրանյանի հետ:
Կողմերը կարևորեցին համագործակցությունը սոցիալական գործընկերության շրջանակներում, օրենքների փոփոխությունները և արհմիությունների դերի կարևորությունը քաղաքականությունների արդյունավետ մշակման գործընթացում, համագործակցությունը՝ աշխատողների իրավունքների պաշտպանության, եկամտային քաղաքականության արդիականացման և երիտասարդության համար արժանապատիվ աշխատանքի հնարավորությունների ընդլայնման ուղղությամբ:
Լյուկ Թրայանգլը բարձր գնահատեց Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի հետևողական աշխատանքը՝ նշելով, որ արժանապատիվ աշխատավարձի և աշխատանքի պայմանների բարելավումը պետք է դառնա պետական-սոցիալական քաղաքականության առաջնահերթություն:
Լյուք Թրայանգլը այցելեց նաև «Մելանտե» ՍՊԸ և Արարատ կոնյակի գործարան և հանդիպեց արհմիության ներկայացուցիչների հետ:
Այցի ավարտին պարոն Թրայանգլը և տիկին Մանասերյանը կարևորեցին շարունակական գործընկերությունը՝ նպատակ ունենալով զարգացնել այն մեխանիզմները, որոնք կնպաստեն աշխատողի մասնագիտական կայացմանն ու կայուն աշխատատեղերի ստեղծմանը երկրում:

Արհմիությունները միավորում են ուժերը Արևելյան Եվրոպայում, Կենտրոնական Ասիայում և Կովկասում՝ աշխատողների իրավունքները պաշտպանելու համար

Արևելյան Եվրոպայի, Կենտրոնական Ասիայի և Կովկասի երկրներում գործող արհմիությունները կանգնած են բազմաբնույթ և խորքային մարտահրավերների առջև՝ սկսած աշխատողների հիմնարար իրավունքների սահմանափակումներից մինչև քաղաքական ու տնտեսական անկայունություն: Այս պայմաններում միջազգային համերաշխությունն ու համատեղ գործողությունները դառնում են ոչ թե ցանկալի, այլ կենսական անհրաժեշտություն: Հենց այս նպատակով **IndustriALL** համաշխարհային արհմիությունների նախաձեռնությամբ կազմակերպվել է երկօրյա ենթատարածաշրջանային հանդիպում, որի ընթացքում տարբեր երկրների արհմիութենական ներկայացուցիչներ հավաքվել էին փորձի փոխանակման, իրավիճակի գնահատման և ապագա համատեղ քայլերի քննարկման համար:
Հանդիպման ընթացքում մասնակիցները քննարկել են աշխատողների և արհմիությունների առջև ծառացած հիմնական խնդիրները: Չնայած այն հանգամանքին, որ տարածաշրջանի շատ երկրներում օրենքով երաշխավորվում են կազմակերպվելու, կոլեկտիվ բանակցությունների և գործադուլի իրավունքները, գործնականում այդ իրավունքների իրագործումը հաճախ խիստ սահմանափակվում է: Արհմիությունները բախվում են բարդ և խոչընդոտող ընթացակարգերի՝ գործադուլի քվեարկության բարձր շեմերի, երկարատև ու անարդյունավետ միջնորդական գործընթացների, ինչպես նաև խիստ ծանուցման ժամկետների հետ: Այս բոլոր գործոնները էապես նվազեցնում են աշխատողների հավաքական գործողությունների արդյունավետությունը:
Բացման խոսքով հանդես է եկել **IndustriALL** համաշխարհային արհմիությունների գլխավոր քարտուղարի տեղակալ Քեմալ Օզկանը, ով վերահաստատել է կազմակերպության հանձնառությունը՝ աջակցելու տարածաշրջանի արհմիություններին:

Նա ընդգծել է անմիջական երկխոսության կարևորությունը: Օզկանը նշել է, որ հանդիպման հիմնական նպատակներից մեկն է պարզել, թե ինչպիսի գործնական աջակցություն կարող է տրամադրել **IndustriALL**-ը՝ արհմիությունների կարողություններն ամրապնդելու և նրանց դիմակայունությունը բարձրացնելու համար:
Հանդիպման ընթացքում հանդես է եկել ելույթով նաև **IndustriALL**-ի գլխավոր քարտուղար Ատլե Հյոյենը, ով ընդգծել է, որ արհմիութենական հիմնարար իրավունքների պաշտպանությունը մնում է կազմակերպության գործունեության առանցքային ուղղություններից մեկը: Նա հատուկ ուշադրություն է դարձրել միավորման ազատության և կոլեկտիվ բանակցությունների իրավունքների պահպանմանը՝ համաձայն Աշխատանքի միջազգային կազմակերպության (**ILO**) թիվ **87** և **98** կոնվենցիաների: Հյոյենի խոսքով՝ ավտորիտար միտումների աճը, գլոբալ կառավարման թուլացումը և գործատուների կողմից կոլեկտիվ պայմանագրերի համակարգված խաթարումը լուրջ սպառնալիքներ են արհմիութենական շարժման համար:
Երկօրյա քննարկումների արդյունքում մասնակիցները եկել են այն եզրակացության, որ միայն համատեղ և համակարգված գործողությունների միջոցով է հնարավոր դիմակայել տարածաշրջանում առկա ճնշումներին: Արհմիությունների միջև փորձի փոխանակումը, կարողությունների զարգացումը և միջազգային կառույցների աջակցությունը դիտարկվեցին որպես աշխատողների իրավունքների պաշտպանության կարևոր գործիքներ:
Այս հանդիպումը ևս մեկ անգամ ցույց է տվել, որ Արևելյան Եվրոպայի, Կենտրոնական Ասիայի և Կովկասի արհմիությունները, չնայած տարբեր ազգային իրողություններին, ունեն ընդհանուր խնդիրներ և ընդհանուր նպատակ՝ պաշտպանել աշխատողների արժանապատվությունը, աշխատանքային իրավունքները և սոցիալական արդարությունը: Այս հանդիպմանը մասնակցել են **IndustriALL**-ի անդամ Լեռնագործների, մետալուրգների և ոսկերիչների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Էդուարդ Փահլևանյանը և Արդյունաբերության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Արիստակես Դանիելյանը:

Աղբյուր՝IndustriALL համաշխարհային միության պաշտոնական կայքէջ
https://www.industriall-union.org/ru/profsoyuzy-obedinyayutsya-dlya-zashchity-prav-v-vostochnoy-evrope-centralnoy-azii-i-na-kavkaze

ՀԱՄԿ-ի տարեվերջյան խորհրդի նիստ

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի (ՀԱՄԿ) 2025 թվականի տարեվերջյան խորհրդի նիստը տեղի ունեցավ դեկտեմբերի 26-ին: Նիստին մասնակցում էին խորհրդի 55 անդամներից 46-ը, որոնք ներկայացնում են ՀԱՄԿ-ին անդամակցող 18 ճյուղային հանրապետական միությունները:

Նիստի ընթացքում ՀԱՄԿ-ի նախագահ Էլեն Մանասերյանը խորհրդի անդամներին ներկայացրեց 2025 թվականի գործադիր կոմիտեի և ՀԱՄԿ-ի գործունեության վերաբերյալ հաշվետվությունը: Նիստի ընթացքում քննարկվեցին անև այլ օրակարգային հարցեր:

Նիստի ավարտին Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի անունից հանձնվեցին շնորհակալագրեր Լեռնագործների, մետալուրգների և ոսկերիչների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության անդամ «ՌՈՒՍԱԼ ԱՐՄԵՆԱԼ» ՓԲԸ-ի արհմիության նախագահ Արամայիս Պետրոսյանը և Կրթության և գիտության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության Վարդենիսի տարածքի արհմիութենական կազմակերպությունների միության նախագահ Կարինե Ասատրյանը:

Պարգևատրման ժամանակ իր շնորհակալական խոսքում Կարինե Ասատրյանը կարևորեց արհմիութենական աշխատանքի միասնականությունն ու համախմբվածությունը՝ ի նպաստ աշխատող մարդու աշխատանքային իրավունքների պաշտպանության:

Հաշվետվությունը կարող եք տեսնել՝ հետևելով հղմանը.
https://hamk.am/uploads/files/report2025.pdf

Ստորագրվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և Լեռնագործների, մետալուրգների և ոսկերիչների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության միջև հուշագիր

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և Լեռնագործների, մետալուրգների և ոսկերիչների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր։

Հուշագիրը ստորագրել են ՀՀ ՏԿԵ նախարարի տեղակալ Ասատուր Վարդանյանը և ՃՀՄ նախագահ Էդուարդ Փահլևանյանը։

Հուշագրի նպատակն է խթանել հանքարդյունաբերության և մետալուրգիայի ոլորտներում սոցիալական գործընկերության զարգացումը, նպաստել ոլորտի աշխատողների աշխատանքի և սոցիալ-տնտեսական իրավունքների պաշտպանության արդյունավետ ապահովմանը, ինչպես նաև աջակցել շրջակա միջավայրի պահպանության և էկոլոգիական անվտանգության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացմանը։

Փաստաթուղթը միտված է նաև զարգացնելու ՀՀ ՏԿԵ նախարարության, ընդերքօգտագործող կազմակերպությունների և ոլորտի աշխատողների միջև համագործակցության արդյունավետ և փոխվստահության վրա հիմնված մեխանիզմները՝ նպաստելով ոլորտի կայուն և պատասխանատու զարգացմանը։

Աղբյուր՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ֆեյսբուքյան էջ

ԲԱՆԱՎՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ
2025 թվական

№	Հարցեր	Քանակ
1	Աշխատանքային պայմանագիր (կնքում, փոփոխում, լուծում)	47
2	Արձակուրդ (ամենամյա, լրացուցիչ, հղիության, ծննդաբերության, չվճարվող)	34
3	Վնասի հատուցում	2
4	Աշխատավարձ	23
5	Անաշխատունակության թերթիկի վճարում	15
6	Աշխատանքային կարգապահություն	28
7	Աշխատաժամանակ	11
8	Հարկադիր պարապուրդ	4
9	Կենսաթոշակի հաշվարկ, արտոնյալ պայմաններով կենսաթոշակ	5
10	Աշխատանքային ստաժ	9
11	Վերջնահաշվարկ	26
12	Խտրականություն	3
13	Արհմիության գործունեությանը վերաբերող հարցեր՝ անդամակցելու, անդամակցությունը դադարեցնելու և անդամավճարների վերաբերյալ	25
14	Այլ	42
Ընդհամենը		274

2 դատական գործ
Վերաքննիչ քաղաքացիական դատարանում վերականգնվել են աշխատողների աշխատանքային իրավունքները:

Տեսանյութերի դիտումները թվերով

Տեսահոլովակների դիտում - **16000**

686 դիտում

230000 դիտում

ԱՄՓՈՓՈՒՄ

Միջազգային արտագնա 14 միջոցառում.

1. աշխատակազմից 8 մասնակցություն,

2. ՃՀՄ-ներից 17 մասնակցություն:

2025 թվականին հրավիրվել է ՀԱՄԿ-ի գործկոմի 6 նիստ

2025 թվականին անցկացվել է 18 սեմինար

Մասնակիցներ-625

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա

Հասցե՝ Վազգեն Սարգսյան 26/3

Հեռ. ՝ +37410 583682

www.hamk.am hamk@hamk.am